



## ԱՌՈՒ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության  
տեսության ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԱԿԱՆ

### ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

### ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏՔՍՈՒՄ<sup>1</sup>

Տնտեսական աճի հիմնախնդիրների քննարկմանը նվիրված մեծածավալ գրականություն կա՝ տեսական մեկնաբանություններ, տնտեսամաթեմատիկական մոդելներ, էմպիրիկ հետազոտություններ, կիրառական մշակումներ, միջազգային համադրումներ և այլն: Դրանց մեջ մասի գիտական արժեքը բարձր է, ինչը կարող է ամուր հենք լինել հետագա ուսումնասիրությունների համար: Այդուհանդերձ, իրականությունն առաջադրում է նոր մարտահրավերներ, որոնց դիմագրավումը ենթադրում է հրաժարվել հնացած կամ միակողմանի մոտեցումներից, կատարել անհրաժեշտ վերանայումներ, փոխել ռազմավարական հայացքը և քաղաքականության կարծրատիպեցը:

#### Հիմնախնդրի բնույթը և ընդհանուր շրջանակը

Ուշագրավ է, որ տնտեսական աճի խոշոր տեսաբան Ոորերտ Սոլոուի գնահատման համաձայն՝ «...դեռևս դժվար է պարզել, թե ուր է ընթանում աճի տեսությունը»<sup>2</sup>: Տնտեսական աճի վերաբերյալ գրականության, ինչպես նաև համապատասխան քաղաքականության մեջ տիրապետող է եղել այն մտայնությունը, որ գերխնդիրը հենց տնտեսական աճն է. բավական է այն լուծել, և հեշտությամբ կլուծվեն նաև մյուս հարցերը: Պատմականորեն միաժամանակ դա տեղի է ունեցել: Սակայն վերջին տասնամյակների զարգա-

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրի մրցույթով ընտրված «Տնտեսական աճի որակը ՀՀ-ում» թեմայի կատարման շրջանակներում:

<sup>2</sup> Solow R., Towards a Macroeconomics of the Medium Run //Journal of Economic Perspectives, 2000, V. 14, N1, p. 153.

ցումները ստիպում են հրաժարվել այդպիսի պատկերացումից, քանի որ դա արդեն հերքվում է ծավալված միտումներով: Եթե տնտեսական աճն անհրաժեշտ է, ապա դեռևս բավարար չէ: Աճի ապահովումը հիմնական մակրոտնտեսական նպատակներից է, բայց ամենակին միակը չէ, հետևաբար՝ անհրաժեշտ է դա համակցել մյուս նպատակների հետ: Բացի այդ, տնտեսական աճի նշանակության կարևորումն արտահայտվել է նաև գործնականում դրա քանակական կողմերի գերազահատումով: Առաջնահերթ է համարվել աճի բարձր տեմպերի ապահովումը: Սա նշանակում է՝ «նախ` քանակը, հետո՝ որակը» մոտեցումը պետք է փոխարինել ի սկզբանե դրանց համադրումով:

Նշված մտայնությունը կենսունակ է և զգալի չափով պահպանվել է: Սակայն եղել են, կան ու ծավալվելու միտում ունեն նաև այլընտրանքային մոտեցումներ: Կրկին արդիականացվում է աճի սահմանների վերաբերյալ հայեցակետը<sup>3</sup>: Ժամանակակից ուրիշ հեղինակներ ևս արտահայտում են սկզբունքորեն տարբեր դիրքորոշում: Այսպես՝ Որբերտ Գորդոնը պնդում է, որ «Տնտեսական աճը չի կարող լինել շարունակական երկարաժամկետ գործընթաց, որ տևում է հավերժ»<sup>4</sup>: Ոչչարդ Հեյնբերգն իր գիրքը Վերնագրել է «Աճի վերջը՝ հարմարվելով մեր նոր տնտեսական իրականությանը»<sup>5</sup>, իսկ թիմ Ջեքսոնը՝ «Բարգավաճում առանց աճի՝ տնտեսագիտություն վերջավոր մոլորակի համար»<sup>6</sup>: Այդօրինակ հարցադրումները ներկայումս հրատապ են զարգացած երկրների համար, որոնցում սպառնան ծավալները արդեն իսկ չափազանց են, ուստի կարևորվում են կյանքի որակի բարելավման մյուս գործուները: Ինչ վերաբերում է չզարգացած և զարգացող երկրներին, ապա դրանց համար տնտեսական աճը դեռևս տևականորեն կպահպանի առաջնահերթությունը: Պարզապես անհրաժեշտ է աճի բոլոր փուլերում հիմնախնդիրների լուծումը որոնել քանակական ու որակական բնութագրերի միասնական տիրույթում:

Տնտեսական աճի առավել տարածված բնորոշմամբ շեշտվող իմաստը, ծավալային առումով և/կամ ըստ մարդաշնչի, երկրում իրական ՀՆԱ մեծացումն է որոշակի ժամանակահատվածում: Տնտեսական աճի նման սահմանումը տրված է հիմնականում քանակական տեսանկյունից, հետևաբար՝ չի կարող որպես բացարկի հիմք ծառայել տնտեսական աճի որակական բազմապիսի բնութագրերի լիարժեք բացահայտման և համակարգման համար<sup>7</sup>: Այդ նպատակով անհրաժեշտ է հենվել տնտեսական աճի՝ հայեցա-

<sup>3</sup> Տե՛ս Meadows D., Randers J., Meadows D., Limits to Growth: The 30-Year Update, Chelsea Green Publishing, 2004:

<sup>4</sup> Gordon R., Is U.S. Economic Growth Over? Faltering Innovation Confronts the Six Headwinds. NBER Working Paper No. 18315, Issued in August 2012, p. 3.

<sup>5</sup> Heinberg R., The End of Growth: Adapting to Our New Economic Reality. New Society Publishers; Original edition, 2011.

<sup>6</sup> Jackson T., Prosperity without Growth: Economics for a Finite Planet. Routledge; Reprint edition, 2011.

<sup>7</sup> Իհարկե, նշված ցուցանիշների էական տարբերությունները նշանակում են նաև համապատակսան որակական տարբերություն: Դա արտահայտված է մարդաշնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշների հիման վրա երկրների տնտեսական դասակարգման մեջ, որում, ընդհանուր առնամբ, արտացոլվում են դրանց զարգացման խիստ տարբեր մակարդակները: Ինչ վերաբերում է իրական ՀՆԱ ծավալին և մարդաշնչի հաշվով դրա մեծությանը, ապա պետք է ընդգծել, որ դրանք, որպես տնտեսական աճի ցուցանիշներ, թեև կապակցված են բնակչության թվաքանակի ու դիմամիկայի հաշվառմամբ, այդուհանդերձ, ունեն նաև որոշակիորեն առանձնացող հմաստային նշանակություն: Այսպես՝ երկուսն էլ մեծանում են, եթե բնակչության թիվն ավելի դանդաղ է աճում, քան ՀՆԱ-ն: Սակայն արդեն կունենան հակադիր ուղղությամբ փոփոխություն, եթե բնակ-

կարգային առումով խորքային ընկալումների վրա: Տվյալ չափանիշին լիովին համարժեք պատկերացման մեկնակետ կարող է լինել Սայմոն Կուզնեցի բնորշումը, որը նա ներկայացրել է իր նորեյան դասախոսության մեջ 1971 թ.:

Համաձայն այդ սահմանման՝ երկրի տնտեսական աճը նրա բնակչությանը ավելի ու ավելի բազմազան տնտեսական բարիքներ առաջարկելու կարողության երկարաժամկետ մեծացումն է, ընդ որում, այդ հարածուն կարողությունը հիմնված է առաջադիմող տեխնոլոգիայի և ինստիտուցիոնալ ու գաղափարական պահանջվող կարգավորումների վրա<sup>8</sup>: Ըստ էության, այստեղ շեշտադրվել է մի քանի տեսանկյուն: Նախ՝ տնտեսական աճը բնույթով երկարաժամկետ գործընթաց է: Իհարկե, այն ունի նաև կարճաժամկետ ու միջնաժամկետ դրսևորումներ, սակայն որակական հիմնավորված բնութագրման, մասնավորապես՝ աճի ինքնապահպանվող բնույթի հաստատման համար ընդհանրացնող, հետևապես՝ նախընտրելի է երկարաժամկետ տրենդի հաշվառումը: Համենայնդեպս, տնտեսական աճի որակը կարող է գնահատվել նշված ժամանակահատվածների համադրումով:

Մեջբերված բնորոշման մյուս շեշտադրումը վերաբերում է երկրի որոշակի կարողության շարունակական մեծացմանը՝ բնակչության համար ապահովելու հարածուն բազմազանությամբ տնտեսական բարիքների առաջարկ: Նման մոտեցումն էական նշանակություն ունի տնտեսական աճի որակի տեսանկյունից և ներկայացնում է դրա չափանիշներից մեկը՝ թողարկվող բարիքների բազմազանության աստիճանը և դինամիկան, որոնք արտացոլում են տնտեսության բազմազանեցման մակարդակը և փոփոխման միտումը: Այդուհանդերձ, այստեղ որոշիչ է այն հիմնարար գաղափարը, որ տնտեսական աճը երկրի բնակչության պահանջնությունների բավարարման կարողության մեծացումն է, այսինքն՝ որոշակիորեն ընդգծված է տնտեսական աճի վերջնական նպատակը, որին ծառայելու չափով էլ այն իմաստավորվում է: Նպատակահարմար է նորմատիվային տեսակետից սա դարձնել տնտեսական աճի որակի ընդհանրացված գնահատման հենք և ուղեցույց: Փաստարկն այն է, որ տնտեսական աճը բնավ ինքնանպատակ չէ, ընդհակառակը՝ այն միջոց է բնակչության անհրաժեշտ կենսամակարդակի ապահովման և դրա պարագետրերի բարելավման համար:

Ս. Կուզնեցի բնորոշումը սկզբունքորեն կարևորում է տեխնոլոգիայի դերը տնտեսական աճի արդի գործընթացի իրականացման մեջ, այսինքն՝ ընդգծում է նաև դրա ապահովման հանգուցային միջոցը: Սա նույնպես հիմնա-

յության համեմատությամբ ՀՆԱ-ն ավելի դանդաղ աճի. այս դեպքում ըստ մարդաշնչի ցուցանիշի նվազումը զուգակցվում է ՀՆԱ որոշ աճի հետ: Բացի այդ, եթե առկա է երկրից բնակչության նշանակալից չափերի միջազգուն արտահոսք, ապա նույնիսկ անփոփոխ ՀՆԱ-ի դեպքում կարծանագրվի մարդաշնչի հաշվով ցուցանիշի համապատասխան աճ: Մյուս կողմից՝ ՀՆԱ մեծությունն ու դինամիկան մեծ կարևորություն ունեն, քանի որ բնույթագրում են երկրի տնտեսության ներուժը, մասշտաբները, տնտեսական հզորության աստիճանը: Երկրների միջև տնտեսական տարբեր համեմատությունների առումով հայտնի փաստ է, որ կարող են համընկել. ա) ծավալով շատ մեծ և մարդաշնչի հաշվով բավականաչափ փոքր ՀՆԱ-ները, ինչպես օրինակ՝ Չինաստանի և Հնդկաստանի դեպքում՝ բնակչության վիթխարի թվաքանակի պատճառով, բ) ծավալով բավականաչափ համեստ, քայլ մարդաշնչի հաշվով աշխարհում ՀՆԱ ամենաբարձր ցուցանիշները, մասնավորպես՝ Արևմտյան Եվրոպայի փոքր երկրների օրինակով: Ասվածից հետևում է, որ տնտեսական աճի ընդհանուր ծավալային և մարդաշնչային ցուցանիշները պետք է օգտագործել ոչ թե դրամը փոխադարձաբար փոխարինելի, այլ փոխլուց նոր դիտարկելու մոտեցմամբ:

<sup>8</sup> Տես Kuznets S., Modern Economic Growth: Findings and Reflections, Nobel lecture delivered in Stockholm. American Economic Review 63, 1973, էջ 247:

րար մոտեցում է տնտեսական աճի որակի բնութագրման համար. առանց առաջադիմական տեխնոլոգիաների կիրառման պարզապես բացառվում է որակյալ աճի հնարավորությունը: Մյուս կողմից՝ որքան ավելի դիմանիկ է տեխնոլոգիական առաջնորդացը և զանգվածային՝ դրա արդյունքների օգտագործումը, այդքան, որպես կանոն, նշանակալից է դաշնում որակական բնութագրերի գերակայությունը: Համեմայնդեպս, արդի որակյալ աճը ոչ մի կերպ չի կարող շրջանցել տեխնոլոգիական արդիականացումը, հետևաբար՝ գիտատեխնոլոգիական զարգացումները ոչ միայն տնտեսական աճի քանակական ապահովման, այլև դրա որակական բարելավման հիմնական աղյուրն են:

Քննարկվող բնորոշման եզրափակիչ շեշտադրումը վերաբերում է ինստիտուցիոնալ ու գաղափարական այն կարգավորումներին, որ անհրաժեշտ միջավայր են ապահովում նշված կարողության ձևավորման, պահպանման և մեծացման համար: Արդի պայմաններում այս հանգամանքը որոշիչ նշանակություն է ստացել, քանի որ տնտեսական աճը ինքնարավ գործընթաց չէ. աննպաստ ինստիտուցիոնալ պայմաններում ոչ միայն բացառվում է տևական ինքնապահպանվող աճի հնարավորությունը, այլև էապես թուլանում են տնտեսական խթանները՝ հանգեցնելով աճի դանդաղման, ընդհատման՝ ընդհուպ տնտեսական անկման ու լճացման:

### **Տնտեսական աճի որակի հիմնական բաղադրիչները**

Մեթոդաբանական իմաստով տնտեսական աճի որակի վերաբերյալ հարցադրումը, դրա համարժեք քննարկումը, լուծման որոնումը և ձևակերպումը պահանջում են համալիր մոտեցում: Հետևապես՝ հիմնավորված չէ տնտեսական աճի հանգեցումը միայն դրա ակնառու դրսերմանը՝ թողարկումը մեծացնելու ձևով, կամ դիտարկումը սոսկ ըստ արտադրության փուլի: Ընդհակառակը՝ համալիր մոտեցման տրամաբանությամբ պակաս կարևոր չեն նաև դրան նախորդող ու հաջորդող բոլոր կապակցված ազդակները և փուլային գործընթացները: Այսպիսով՝ տնտեսական աճն ու դրա որակը անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ մակրոտնտեսական գործընթացի ամբողջական տիրույթում ներառելով տնտեսական ռեսուրսների տեղաբաշխումը և ներդրումային հոսքերը, արտադրանքի թողարկումը և ավելացումը, դրա առաջնային բաշխումը և հետագա վերաբաշխումը, օգտագործումը, ինչպես նաև այս ամենի փոխազդեցության և հաջորդափոխության դիմանիկ ընթացքը: Ըստ նշվածի՝ տնտեսական աճի որակի հիմնական բաղադրիչներն են՝

✓ Թողարկված վերջնական բարիքների որակը և դրա դիմանիկան՝ նկատի ունենալով, որ տնտեսական աճը չափվում է իրական ՀՆԱ-ի հիմնակարագիրը, որը արտադրանքի հոսքային բնույթի ցուցանիշ է: Նույնիսկ եթե ՀՆԱ ֆիզիկական ծավալը մնա անփոփոխ, այսինքն՝ տեղի չունենա դրա տարրերի քանակական աճ, սակայն միաժամանակ բարձրանա վերջնական բարիքների որակը, ապա դա տնտեսական դիմանիկայի որակական բնութագրերի բարելավում է:

✓ Թողարկվող արտադրանքի մրցունակության աստիճանը և դրա բնութագրերի դիմանիկան՝ ելնելով այն ընկալումից, որ որակյալ տնտեսական աճն ըստ էության նշանակում է նաև ներքին և/կամ արտաքին շուկաներում մրցունակության ծեփքերում, պահպանում և ամրապնդում: Խոսքը հատկա-

պես այն բարիքների մասին է, որոնց արտադրության մեջ երկիրն ունի համեմատական առավելություններ կամ կարող է դրանք ձևավորել: Մյուս կողմից՝ մրցակցային բնականոն միջավայրը կենսականորեն անհրաժեշտ է աճի որակի ապահովման ու բարելավման համար, իսկ մրցակցության տարրանույթ սահմանափակումները, մենաշնորհացման միտումի խորացումը, մրցակցության պաշտպանության ու հակամենաշնորհային քաղաքականության ձախողումները ոչ միայն բացառում են աճի որակի բարելավումը, այլև թուլացնում են դրա քանակական ցուցանիշների ապահովումը:

✓ Տնտեսական աճի, իսկ ավելի տարրունակ ինաստով՝ զարգացման ներուժի որակական բնութագրերը և դրանց դինամիկան՝ հենվելով այն իրողության վրա, որ որակյալ տնտեսական աճը նաև տնտեսության արտադրության հնարավորությունների ծեսավորման, ընդայնման, կատարելագործման ու պատշաճ օգտագործմամբ իրացման գործընթացների համադրություն է: Դա նշանակում է՝ քննարկվող հարցում էական է դինամիկայի դիտարկումն ըստ պոտենցիալ ՀԱԱ-ի: Այս առօնով, տնտեսական աճի որակապես ամենացածր տիրությամբ վերաբերում է արտադրանքի գուտ քանակական աճին, որ տեղի է ունենում անփոփոխ, երբեմն էլ նվազած արտադրական հնարավորությունների պարագայում:

✓ Տնտեսական աճի աղբյուրների, ռեսուրսային նախադրյալների կամ ապահովվածության աստիճանի, ինչպես նաև ուղղակիորեն մասնակցող ու ազդող գործոնների որակական բնութագրերը և դրանց դինամիկան: Այստեղ ելակետն այն է, որ տնտեսական աճը նախ ընթանում է առաջարկի տիրություն: Դա նշանակում է՝ էական են արտադրության կազմակերպման ծեզնարկատիրական, աշխատանքային և տեխնոլոգիական կողմերը, ինչը որոշիչ դեր է վերապահում մարդկային և ֆիզիկական կապիտալում կատարվող ներդրումներին, արտադրության գործոնների համակցման նորարարական բարելավումներին:

✓ Տեղաբաշխման, տեխնիկատնտեսական և սոցիալ-տնտեսական արդյունավետության ցուցանիշները, որոնց հիման վրա ծևավորված անփոփ զնահատականը հանգուցային է տնտեսական աճի որակի ու դինամիկայի բնութագրման համար: Էքստենսիվ տնտեսական աճը միարժամանակ կարող է տեղի ունենալ անփոփոխ կամ նույնիսկ նվազող արդյունավետության դեպքում, սակայն որակյալ աճը բնորոշ է առավելապես ինտենսիվ տիպին, և դրա առանցքային տարրը ընդհանուր գործոնային արտադրողականության կայուն բարձրացումն է: Դա ենթադրում է նաև արդյունավետության տարբեր ցուցանիշների բարելավում՝ նկատի ունենալով աշխատանքի արտադրողականությունը, կապիտալագինվածությունը, կապիտալահատույցը, կապիտալատարույնը, նյութատարությունը, էներգատարությունը և այլն:

✓ Տնտեսական աճի դինամիզմը բնութագրող ցուցանիշները, մասնավորապես՝ տեմպերի մեծությունը և փոփոխությունը, կայունությունը, անընդհատ շարունակման տևողությունը, աննպաստ գործոններին ու հակառակ միտումներին դիմակայելու, դրանք հաղթահարելու կարողությունը և արագությունը, այսինքն՝ ըստ էության, տնտեսական աճի ինքնապահպանման ապահովումը: Որակական տեսանկյունից աճի բարձր տեմպերի առավելությունն այն է, որ թույլ է տալիս անհամենատ կարծ ժամկետում էական մեծացնել իրական թողարկումը: Մասնավորապես՝ 70-ի կանոնի համաձայն, այդ թվի ու

հավելածի տեմպի հարաբերությամբ որոշվում է ՀՍԱ-ն կրկնապատկելու համար անհրաժեշտ տարիների թիվը:

✓ Հավելածի կշիռը բացարձակ արտահայտությամբ: Այս ցուցանիշի կարևոր առավելությունն այն է, որ թույլ է տալիս միակողմանիորեն չսահմանափակվել տեմպի հարաբերական մեծությամբ, քանի որ, կախված ՀՍԱ հնարավոր տարրեր չափերից, աճի տրված միևնույն տեմպին կարող են համապատասխանել դրա կշրի միանգամայն տարրեր մեծություններ: Որպես կանոն, փոքր ՀՍԱ նույնիսկ բարձր տեմպերով աճն ապահովում է համեմատաբար ցածր կշռով հավելած: Նմանապես, խոշոր չափերի ՀՍԱ-ն կունենա «ծանր» կշռով հավելած, եթե անգամ աճի տեմպերը ցածր են: Մյուս կողմից՝ նախընթաց զարգացումների փորձը ցույց է տվել, որ, իրական թողարկման ծավալի տևական մեծացմանը և խոշոր մասշտաբի հասնելուն գործընթաց, աճի տեմպերը նվազում են:

✓ Տնտեսական աճի համար անհրաժեշտ նպաստավոր պայմանների կամ միջավայրային գործուների որակը և փոփոխությունների միտունը: Նախևառաջ նկատի են արնվում ձեռնարկատիրական, ներդրումային և աշխատանքային գործունեության մթնոլորտի տարրեր բնութագրերը: Առանձնապես որոշիչ դեր ունի արդար և բարեխիղձ մրցակցային մեխանիզմը, որ տնտեսական աճի ու դրա որակի ապահովման և բարձրացման գլխավոր շարժիչն է: Նշանակալից են նաև տնտեսական ազատության ընդհանուր երաշխիքները, սեփականության իրավունքների օրինականության ու պաշտպանության ապահովումը, «խաղի կանոնների»՝ տարաբնույթ նորմերի, սահմանափակումների հաստատումը, կատարման պարտադրումը, խախտուների դեպքում համարժեք պատժամիջոցների (սանկցիա) կիրառումը՝ ուղեցույց ունենալով վարչադրավական կարգավորումների հարցում անհրաժեշտ և բավարար չափի պահպանման սկզբունքը: Ամեն դեպքում, երբ լինում են արտադրատնտեսական գործունեության ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի անհամապատասխանություն և ձախողումներ, դրանք վերածվում են տնտեսական ակտիվության ձնշման լծակների, վերջին հաշվով՝ որակյալ աճի խափանման մեխանիզմի:

✓ Կառուցվածքային կերպափոխումները, որ երկարաժամկետ շրջանում ընթանում են ազգային տնտեսության մեջ. ա) ըստ ճյուղերի, հատվածների ու տարածաշրջանների, բ) տնտեսական բարիքների տեսականու, հարաբերակցության փոփոխման և զբաղվածության տեղաշարժերի առումով, գ) խոշոր, միջին և փոքր գործարարության տեսակարար կշրի և հարաբերական դերի փոփոխությունների իմաստով, դ) արտադրական, սոցիալական, շուկայական և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքներում, ե) ՀՍԱ մեծության մեջ՝ ըստ ծախսերի և եկամուտների դրանց համանամություններում:

✓ Տնտեսական աճի շնորհիվ հանրության կենսապահովման ու բարեկեցության մակարդակի բարձրացման իիմնախնդիրների լուծման հաջողության և ընդգրկման աստիճանը: Որակյալ տնտեսական աճի համատեքստում առաջնահերթ են դաշնում եթե ոչ լրիվ, ապա գոնե բարձր զբաղվածության, արդարացի փոփոխության ապահովումը և շահագործման բացառումը, դրանց վրա հենվելով՝ զանգվածային ու տևական գործազրկության հաղթահարումը, աղքատության էական կրծատումը, մասնավորապես՝ աշխատողների աղքատության վերացումը:

✓ Արտաքին տնտեսական կապերի տիրույթում երկրների դիրքը, դրանց միջև ստատիկ ու դիմամիկ առօւմներով միջազգային համադրումների ու համեմատությունների տարբեր ցուցանիշները: Դրանք հնարավորություն են տալիս չափանակակվել երկրի ներքին դիմամիկայով՝ դիտարկելով դա սեփական անցյալի նկատմամբ, հաշվի առնել միջազգային մրցակցության իրողությունները և մարտահրավերները՝ բացահայտելով վերջիններիս դիմագրավման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև արծանագրված դրական արդյունքները և բացասական միտումները:

✓ Տնտեսական աճի խթանման և կարգավորման քաղաքականության որակը: Դա ամենից առաջ պայմանավորված է զարգացման ռազմավարական մոտեցումների հիմնավորությամբ՝ հատկապես հեռահար ձիշտ նպատակադրումներով, առկա հնարավորությունների իրատեսական գնահատմամբ և արդյունավետ գործադրման կարողությամբ: Սա նախապես պահանջում է աճին խանգարող տարաբնույթ արգելքների վերացման անհրաժեշտության գիտակցում, հետևաբար՝ բացահայտման պատրաստակամություն և հաղթահարման հետևողականություն, այնուհետև կարևորվում են գերակյայությունների հիմնավորված սահմանումը, համապատասխան ռեսուրսների ուղղորդումը, մակրոտնտեսական կայունության ապահովումը, պետական աջակցության կազմակերպումը՝ հատկապես գիտատեխնիկական, արդյունաբերական, ներդրումային, կառուցվածքային, արտահանման խթանման քաղաքականությունների միջոցով և այլն:

Այսախուզ՝ տնտեսական աճի որակի բաղադրիչները տարաբնույթ են՝ շաղկապված փոխազդեցության բարդ գործընթացում: Դրանք կարելի է դասակարգել երեք խմբում՝ արդյունքային, գործոնային և գործընթացային: Գործոնները համակցվում են, ինչը գործընթացի սկիզբն է, և հետագայում ստացվում են որոշակի արդյունքներ: Բացի այդ, դրանց միջև կան նաև փոխակերպումներ. այսպես՝ գործոնների ծեզավորումը, պահպանումը, նորացումը գործընթացներ են, իսկ գործոններն ինքնին՝ դրանց արդյունքներ:

### **Տնտեսական աճի որակը զարգացման հայեցակարգի համատեքստում**

Տնտեսական աճի վերոհիշյալ որակական բաղադրիչներն ընդհանուր հայտարարի բերելու համար պահանջվում է համապատասխան հայեցակարգային հիմք: Դա օբյեկտիվորեն հնարավոր և անհրաժեշտ է զարգացման վերաբերյալ արդի խորքային պատկերացումների տեսագործնական ընդունմամբ: Նախքան այդ պատկերացումներին անդրադառնալն, առաջադրենք հետևյալ հիմնարար դրույթը. ընդհանուր առնամբ, որակյալ է այն տնտեսական աճը, որը համատեղելի է զարգացման հետ: Նպատակահարմար է քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ ներկա և ապագա ուսումնասիրությունները բխեցնել նշված մոտեցումից, իսկ քաղաքականության շրջանակում որոշումների ընդունումը և իրագործումն ուղղորդել դրա տրամաբանությամբ: Դա կարելի է անվանել զարգացման հետ համատեղելի տնտեսական աճի մոդել:

Ներկայացված մոտեցմամբ տնտեսական աճի և զարգացման լրիվ նույնացումը կամ զարգացման պարզ հանգեցումը տնտեսական աճին մակերեսային ու միակողմանի, իսկ գործնականում ապակողմնորոշող ընկալում է: Այստեղ շոշափվում է տնտեսական աճի և զարգացման փոխհարաբերության

հարցը, որը թեև բավականաչափ իիմնավոր քննարկվել և մեկնաբանվել է ինչպես տնտեսագետների, այնպես էլ այլ գիտաճյուղերի ներկայացուցիչների կողմից, այդուհանդերձ, դեռևս հանդիպում են դրանց թյուրըմբօննան և շահարկման փորձեր: Ուստիև տեղին կլինի մի քանի ընդհանրացումով բնութագրել տնտեսական աճի և զարգացման հարաբերակցությունը:

Տնտեսական աճը և զարգացումն ունեն ինչպես ընդհանրություն, այնպես էլ տարրերություն: Ըստ այդմ՝ պետք է խուսափել դրանց նույնացումից: Ընդհանրության տիրույթում տնտեսական աճը և զարգացումը, որպես կանոն, դրսևորվում են համընթաց՝ լինելով, համապատասխանաբար, մասի և ամբողջի փոխազդեցության մեջ, իսկ տարրերությունները կարող են հասցնել անգամ հակադրության: Զարգացումը պետք է տարրողունակ, բազմաշերտ ու խորքային բովանդակություն ունի, քան տնտեսական աճը: Հետևաբար, նաև դրանով պայմանավորված, զարգացման հետ պետք է շաղկապել նպատակադրումները, իսկ տնտեսական աճի հետ՝ դրանց իրագործումը: Այս իմաստով, զարգացումը և տնտեսական աճը «նպատակ-միջոց» փոխհարաբերության մեջ են:

Ասվածից հետևում է, որ գերակա դիրքը ներհատուկ է զարգացմանը, և դա կողմնորոշիչ պետք է լինի ոչ միայն տեսամեթոդաբանական, այլ նաև հենց գործնական առումով: Այս մոտեցումը կիրառելու առաջին քայլը տնտեսական աճի հնարավոր կարգավիճակների որոշակիացումն է զարգացման համատեքստում: Սկզբունքորեն կարելի է առանձնացնել երկու տիպային տարրերակ՝ զարգացման հետ համատեղելի և անհամատեղելի տնտեսական աճի սցենարներ: Առաջին տարրերակում ընդգծվում է զարգացման և տնտեսական աճի միասնության ընդհանուր տիրույթը: Էվոլյուցիայի որոշ փուլերում տնտեսական աճն անհրաժեշտ է զարգացման համար, այսինքն՝ զարգացումն առավելապես ընթանում է աճի հիման վրա: Սակայն անգամ այս պարագայում տնտեսական աճն ինքնին չի ապահովում բավարար պայմանը: Վերջինս կախված է բոլոր այն մեխանիզմների գործողությունից, որոնք կոչված են տնտեսական աճով ծեռք բերված արդյունքները ծառայեցնելու զարգացման նպատակներին:

Տնտեսական աճը միշտ չէ, որ նշանակում է զարգացում. դա կարող է ընթանալ նաև առանց զարգացման: Երկրորդ տարրերակը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տնտեսական աճը այս կամ այն ձևով ու չափով շեղվում է զարգացման խնդիրներից ու չափանիշներից՝ ըստ էության հակադրվելով դրա բուն տրամաբանությանը: Նման հակազարգացումային դրսևորումների նմուշօրինակ կարող են համարվել տնտեսական աճի պայմաններում եկամուտների ու հարստության անհավասարության ծայրաստիճան խորացումը՝ հասնելով բնեռայնության անբնական մակարդակի, միջին խավի թուլացումը, աղքատության՝ մեծ չափերով ծավալումը, գործազրկության տևական ու զանգվածային բնույթը, տարածաշրջանային անհամանանությունների սրումը, բնամիջավայրային վատթարացումը (դեգրադացում) և այլն:

Այսպիսով՝ տնտեսական աճը կարող է ինչպես համատեղվել, այնպես էլ չհամատեղվել զարգացման հետ: Դա կախված է այն շաղկապված բնութագրերից, որոնց շրջանակում ձևակերպվում են առաջնահերթ խնդիրները, հետազոտության մեթոդաբանական հիմնադրույթներից, տնտեսականի համեմատությամբ ավելի տարրողունակ երևույթների, դրանց փոփոխման միտում-

ների գնահատումից և այլն: Ըստ որում, տնտեսական աճը զարգացման եզակի ուղի կամ պարտադիր նախադրյալ չէ: Դա նշանակում է, որ որոշակի պայմաններում զարգացումը կարող է տեղի ունենալ, մասնավորապես, նաև կառուցվածքային առաջադիմական տեղաշարժերի, սոցիալական բարելավումների, ինստիտուցիոնալ արդիականացման և համաննան շաղկապված ձևերով: Առանց էական աճի՝ զարգացումը ոչ միայն հնարավոր է, այլև ոչ այնքան հեռու ապագայում կարող է դառնալ անհրաժեշտ:

Զարգացման համատեքստում առաջադրելով տնտեսական աճի որակի ուսումնասիրության և գնահատման մոտեցումը, պետք է անդրադարձն զարգացման հետ համատեղելի տնտեսական աճի ռազմավարության իմնադրույթներին: Նախ ընդգծենք, որ համընթաց լինելու դեպքում էլ անհրաժեշտ է տնտեսական աճի արդյունքները փոխակերպել զարգացման նախադրյալների: հակառակ դեպքում դա ինքնաբերաբար կարող է տեղի չունենալ: Մյուս կողմից՝ իրական զարգացումը որակյալ տնտեսական աճի հարուցման և ինքնապահպանման թերևս ամենահիմնավոր ուղին է:

Զարգացումն ամենակի էլ միայն «բարձր մատերիաներին» վերաբերող երևույթ չէ: Այն նույնական ունի տարբեր աստիճաններ՝ ներառյալ համեմատաբար ցածր սկզբնական փուլը, որը միաժամանակ ցույց է տալիս զարգացման ձիշտ ընտրված մեկնակետը, ինչպես նաև ներկայացնում է դրա չափանիշներից մեկը: Եթե երկիրն ի վիճակի չէ սեփական ուժերով լուծել անբողջ բնակչության գոյատևման խնդիրը, ապա գտնվում է չզարգացած կամ, լավագույն դեպքում՝ թերզարգացած վիճակում, եթե նոյնիսկ առերևույթ արձանագրվում է տնտեսական աճ: Եթե հետևողական ջանքերով հաջողվում է աստիճանաբար լուծել նշված խնդիրը, ապա դա նշանակում է, որ երկիրն սկսել է ընթանալ զարգացման ձանապարհով: Այդ առումով տեղին է նշել զարգացման տնտեսագիտության մեջ մշակված հիմնական (բազային) պահանջնունքների մոտեցումը, որի կենսագործումը, ըստ էության, զարգացման ուղղությամբ անհրաժեշտ առաջին քայլն է:

Հիմնական պահանջնունքները ներառում են սննդի, հագուստի, բնակարանի, առողջության, բազային կրթության և սոցիալական պաշտպանվածության նվազագույն կարիքները, բնականաբար՝ ողջ հանրության ընդգրկմանը: Այս առումով, տնտեսական աճը զարգացման հետ համատեղվում է այն դեպքում, երբ ծառայում է հիմնական պահանջնունքների խիստ թերի բավարարման իրավիճակների արագ և վերջնական հայթահարմանը: Իր հերթին, սա զարգացման հաջորդ՝ ավելի բարձր փուլին անցնելու ամուր և հուսալի հիմք է ստեղծում, ինչը նախադրյալ է պահովում նաև տնտեսական աճի որակի բարելավման համար: Հակառակ պարագայում խորանում են, այսպես կոչված, դրայիստական միտումները, որոնք անխուսակելիորեն ուղեկցում են ինքնահոսի թողնված տնտեսական աճին: Այսպիսով՝ հիմնական պահանջնունքների մոտեցման շեշտադրումը կարևոր է, քանի որ թույլ է տալիս պահովել զարգացման և տնտեսական աճի գործընթացների ձիշտ վեկտորային ուղղվածությունը դրանց սոցիալական կողմնորոշման հունով՝ առանց որի դրանք դառնում են աննպատակ կամ ինքնանպատակ:

Նշված ուղղությամբ զարգացման մյուս մեկնաբանությունը կապված է մարդկային ներուժի ձևավորման, լիարժեք օգտագործման, պահպանման և պատշաճ իրացման խնդիրների առաջնահերթությունն ընդունելու և դրանք հաջողությամբ լուծելու հետ: Սրանով նշանավորվել է զարգացման էության

ընկալման շրջադարձային փոփոխությունը, ըստ որի, գարգացման վերաբերյալ ավանդական պատկերացումն արմատապես վերանայվել է՝ փոխարինվելով մարդկային զարգացուման հայեցակարգով: Թեև մարդկային ներուժի զարգացումը համարվում է նաև ինքնին նպատակ, այդուհանդեռձ, այն վճռորոշ դեր ունի երկարաժամկետ տնտեսական աճի հնարավորության ստեղծման ու դրա իրականացման հարցում: Ասվածից հետևում է, որ զարգացման հետ համատեղելի տնտեսական աճը մեծապես պայմանավորված է սոցիալական գործոններով: Այդ առումով հատկապես կարևոր են մասնագիտական կրթության համակարգը, գրադարձության հնարավորությունները, պայմաններն ու երաշխիքները, առողջապահության համակարգը, բնակարանյին ապահովվածությունը:

Զարգացումը նպաստում է որակյալ տնտեսական աճին նաև մի շարք այլ առումներով: Մասնավորապես՝ գիտության նվազումները և դրանց հանրօգուտ կիրառումը դրսնորվում են նոր բարիքների, տեխնոլոգիաների, նյութերի և այլ ծներով: Այսինքն՝ ստեղծվում են տնտեսական աճի նոր ուղղություններ և հնարավորություններ, որոնց հրացման շնորհիվ կազմավորվում են արտադրության նոր ճյուղեր, նոր շուկաներ կամ դրանց հատվածներ: Դրանք հագեցման աստիճանին մոտեցնելը կարող է պահանջել տևական ժամանակ, որի ընթացքում համապատասխան նոր պահանջմունքների բավարարման մղումը նպաստում է աճի նոր բևեռների դիմանմիկ ծավալմանը: Եթե նկարագրված գործընթացը որոշակի պարբերաշրջանով չի ավարտվում, այլ շարունակական է, քանի որ միևնույն ժամանակամիջոցում սկսվում է նմանատիպ մեկ ուրիշ շրջափուլ, ապա այն նորամուծական զարգացման դրսնորում է:

### **Հասարակության և տնտեսակարգի տիպային հատկանիշները որպես տնտեսական աճի որակը կանխորոշող գործոններ**

Չնայած անվանմանը, տնտեսական աճը բացառապես տնտեսական երևոյթ չէ և չի կարող այդպիսին լինել: Դա միշտ էլ ընթանում է ավելի բազմաշերտ միջավայրում, որը կազմավորվում է բնական, սոցիալական և տեխնոլոգիական որոշակի պայմաններով: Այդ միջավայրը հարավորին է, ինչը բացատրվում է նշված պայմանների փոխազդեցությամբ ու փոփոխություններով: Ըստ որում, տնտեսական աճը զգայուն է ինչպես տնտեսական, այնպես էլ ոչ տնտեսական (արտատնտեսական) պայմանների նկատմամբ: Բավական է վկայակոչել քաղաքական (ներքին և արտաքին), սոցիալական, բնական, մշակութային, ինստիտուցիոնալ, ժողովրդագրական, ազգային-հոգեբանական միջավայրերի անուղղակի, բայց նշանակալից ազդեցությունը տնտեսական դիմանմիկայի վրա:

Այսպիսով՝ տնտեսական աճի որակական բնութագրերը մեծապես կախված են հասարակության և տնտեսական համակարգի տիպային հատկանիշներից: Մի դեպքում դրանք նպաստում են երկարաժամկետում կայուն տնտեսական աճին, այլ պարագայում՝ դրա ճանապարհին հարուցում տարաբնույթ խոչընդոտներ: Հետևաբար՝ հրատապ է այն հարցը, թե որ տիպի հասարակությունը և տնտեսական համակարգն են առավել նպատակահարմար զարգացման հետ համատեղելի տնտեսական աճի համար: Դրա հիմնավոր բննարկման և լուծնան նպատակով անհրաժեշտ է տարանջատել երեք դիտանկուն: առաջին՝ ինչպես է տեղի ունենում տնտեսական աճը իրականում,

Երկրորդ՝ ինչպես է այն ուսումնասիրվում ու մեկնաբանվում տնտեսագիտության մեջ, Երրորդ՝ որքանով է հետազոտությունը համակողմանի, խորքային և գործնականորեն օգտակար:

Նախ՝ նշված տեսանկյունից հակիրձ անդրադառնանք տնտեսական աճի տեսություններին ու մոդելներին: Տնտեսագետները դա առավելապես դիտարկում են որպես զուտ մակրոտնտեսական երևոյց՝ հիմնականում սահմանափակվելով անմիջաբար մասնակցող տնտեսական գործոնների ուղղակի ազդեցության կարևորումով ու դրա չափի գնահատումով: Այդպիսի մոտեցումն ակնառու է հատկապես ազրեգացված արտադրական ֆունկցիաներում: Լավագույն դեպքում դրանք չափազանց ընդհանրական ծևով նկարագրում են որոշակի առնչություններ և համամասնություններ<sup>9</sup>: Մեթոդաբանական ինսաստով հենց այդպիսի ազրեգացումն է խնդրահարույց, քանի որ ներառվող պարամետրերը միկրոմակարդակում բազմազան են, ոչ այնքան համադրելի և այլն: Այսպես՝ ազրեգացված արտադրական ֆունկցիայի հետևանքով կարող է այնպիսի տպագրություն ստեղծվել, թե ամբողջական մակրոմիավորի մասշտարկով համաչափ տնտեսական աճ է արձանագրվում: Բացի այդ, դրանում ուղղակիորեն «չեն մասնակցում» պետության տնտեսական քաղաքականության, մասնավորապես՝ միջամտության ծևերի ու չափերի, կարգավորման փոփոխությունները, ինչպես նաև տնտեսական աճի համար որոշիչ ձեռնարկատիրական գործունեության տարրեր բնութագրերը: Եսկ անուղղակի ծևով դրանք ավելի շուտ արտահայտվում են թողարկված համախառն արդյունքի մեջ՝ գործարար ակտիվությունը բնութագրելով եք post, քան եք ante, ընդգրկվելով առաջարկի գործոնների կազմում: Այդուհանդերձ, դրանք մշակվել են և տեղին են զարգացած երկրներում, որտեղ հնատիտուցիոնալ միջավայրը սկզբունքորեն կայացած և նպաստավոր է տնտեսական աճի համար: Սակայն չի բացառվում, որ մակրոտնտեսական դինամիկայի մոդելների թույլ տեղերը բացահայտվեն իրական միտուներից խզումով և կանխատեսման ձախողումներով, ինչը դրույմ է վերանայել ավանդական մոտեցումը, կատարել լրամշակումներ, կիրառել այլ գաղափարներ:

Տնտեսական աճի ստանդարտ մոդելների գործնական նշանակությունն էակես նվազում է հետամնաց, զգարգացած, թերզարգացած և զարգացող երկրների դեպքում: Դրա հիմնապատճառն այն է, որ այդ երկրներում առկա իրողությունները բոլորովին այլ են: Այստեղ զարգացման ռազմավարության ելակետ կարող է լինել տնտեսական աճի ներուժի ստեղծման և իրացման համար պահանջվող միջավայրի ձևավորումը: Իհարկե, զարգացած երկրների փորձը ուսանելի է, քանի որ դրանում արտացոլվում են նաև զարգացման ընդհանուր օրինաչափությունները, սակայն անհրաժեշտ է ամբողջության մեջ դա խորությամբ վերլուծել, ճիշտ ինաստավորել և հիմնավորապես տեղայնացնել: Մեխանիկական մասնակի նմանակումների դեպքում անհամենատ բարձր է ձախողման, քան հաջողության հավանականությունը:

<sup>9</sup> Դրանց պահպանումը չի երաշխավորվում բոլոր դեպքերի համար: Մոդելը միարժանանակ, նաև տեսականորեն կարող է աշխատել իրեն ներհասուկ տրամաբանությամբ: Սակայն միջավայրային կտրուկ փոփոխությունն այն կարող է ընդհատել՝ ավելի ու ավելի շեղվելով իրական գործընթացի բնութագրերից: Բնորոշ օրինակ է 2007 թ. սկսված ճգնաժամը տնտեսական աճի առկա գործոնները չեին կրծատվել, սակայն առաջմ, հատկապես Եվրոպայում, չի ապահովվում նաև սովորաբար ակնկալվող արդյունքների ստացումը: Սա լրացնուիչ հիմնավորում է, որ մոդելը չի ներառում տնտեսական աճի համար իրականում շատ կարևոր մեկ կամ մի քանի ազդակ:

Վերադաշնալով այն հարցին, թե իրականում ինչպես է տեղի ունենում տնտեսական աճը, հարկ է նշել, որ դա ընթանում է ոչ թե տեսական «դեղատոմսերի» ուղղորդմամբ, այլ գործնական տրամաբանությամբ, տատանումներ, նույնիսկ վայրիվերումներ ունեցող էվոլյուցիոն ձանապարհով։ Տեսությունները և մոդելներն առավելագույն բացատրում են տնտեսական աճն ու դրա դիմանմիկան ընդհանուր գծերով, մեծ մասամբ հետահայաց, ներկա և «եթե, ապա» մոտեցումներով, ինչպես նաև առաջարկում են իրենց խորհրդատվությունը տնտեսական քաղաքականության նախընտրելի միջոցառումների վերաբերյալ։ Առկա մոդելները թեև պահանջում են մտավոր մեծ կարողությունների ներդրում, բավարար ճշտությամբ ու որոշակիությամբ չեն կարողանում կանխատեսել գործուների ընթացիկ ազդեցությունը, վերջնարդյունքները, առանձնապես՝ հնարավոր դանդաղումը, ընդհատումը և անկումը տարբեր շղկերի ազդեցությամբ, ինչպես նաև վերականգնողական աճի տևողությունը և հետագա աճի հերանկարները։ Որոշ մոդելներ քննադատվում են ոչ միայն կանխատեսման թույլ հնարավորության պատճառով, այլ նաև որովհետև բացառում են որևէ կանխադրույթ շղկերի հավանականության մասին։

Այս պայմաններում նպատակահարմար է խուսափել տնտեսական աճի ուսումնասիրության մեջ մակրոտնտեսական մոտեցման բացարձակացումից՝ դա համարելով միկրոնակարդակի գործընթացների վերլուծությամբ։ Այստեղ էական է այն հիմնահարցը, թե ինչպես է ընթանում աճը միկրոնակարդակում, ինչպես է կատարվում դրա ագրեգացումը, այսինքն՝ ինչ պատկեր է բացահայտվում տնտեսական աճի միկրոտնտեսական հատույթով։ Այս տեսանկյունից պարզ է, որ տնտեսական աճն ունի միկրոտնտեսական հիմքեր ու աղբյուրներ, որոնցից կախված է։ Դա նշանակում է՝ տնտեսական աճը մեծաթիվ ու տարաբնույթ միկրոդիմիկաների հավաքական արդյունք է<sup>10</sup>։ Տվյալ մոտեցումը թույլ է տալիս համարժեքորեն արտացոլել այն իրողությունը, որ իրական աճն ամենակին համաչափ չէ, ըստ որում, ոչ միայն տարբեր տեսմաների առումով, այլև քանի որ առանձին միկրոդիմիկաները դրսկորվում են տարբեր՝ աճի, անփոփոխ մնալու կամ կրճատման ձևով։ Դա նաև նշանակում է, որ միկրոսուբյեկտները հիմք ունեն իրենց տնտեսական կարգավիճակը և դրա փոփոխությունը գնահատելու ոչ այնքան ագրեգացված, որքան ուղղակիորեն սեփական միկրոդիմիկայից ելնելով։

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ միկրո- և մակրոնակարդակների կապը միակողմանի չէ։ Դրանք փոխազդեցության բարդ գործընթացում են։ Սա նշանակում է, որ միկրոդիմիկաները ոչ միայն կանխորոշում են ՀԱ մեծությունն ու փոփոխությունը, այլև զգալիորեն պայմանավորված են մակրոմիջավայրի պայմաններով։ Իրոք, միկրոսուբյեկտներն իրենց արտադրատնտեսական գործունեության ծավալման, ընդլայնման, ինչպես նաև կրճատ-

<sup>10</sup> Հետևյալ համեմատությունը կարող է պատկերավոր դարձնել ծևակերպված դրույթը։ Եթե տնտեսությունը ննանեցնենք գետի ավագանին, որն ունի բազմաթիվ և տարբեր չափերի հոսք ունեցող վտակներ, ապա գետը կներկայացնի ընդհանուր մակրոհոսք, իսկ վտակները՝ միկրոդիմիկաները։ Ակնառու է, որ, սուլուցվելով վտակներից, գետի հոսքը կախված է դրանցից՝ փոփոխություններով հանդերձ։ Վտակների մի մասում հոսքը կարող է վարարել, մյուսում՝ նվազել կամ նույնիսկ ցանքաբերել, որոշ վտակներ էլ կունենան նոյն հոսքը։ Հետևաբար՝ որքան ավելի շատ լինեն վտակները, և դրանց գերակշիռ մասում ջրի հոսքը մեծանա, այնքան ավելի ջրառատ կլինի գետու։ Տվյալ դեպքում միկրոդիմիկա ասելով նկատի է առնվում ըստ առանձին միկրոսուբյեկտների վերջնական արդյունքների թողարկման փոփոխությունը՝ ուղղության ու մեծության առումով։

ման կամ ընդհատման վերաբերյալ որոշումներն ընդունում են ինչպես իրենցից կախված, այնպես էլ անկախ գործոնների համալիրի հաշվառման՝ վճռորոշ դեր վերապահելով գործարարության մթնոլորտին, դրա պայմանների փաստացի փոփոխություններին, հիմնական բնութագրերին վերաբերող սպասումներին, վերջին հաշվով՝ այլընտրանքային տարբերակներում սեփական նպատակների իրականացման հեռանկարին և աստիճանին: Այդ ինաստով, տնտեսական աճի դանդաղումը, ռեցեսիան, առավել ևս դեպրեսիան ու ստագնացիան արտահայտում են նաև մակրոտնտեսական պայմանների զգալի վատրացումը: Մյուս կողմից՝ երկարաժամկետ կայուն աճն անուղակիրեն վկայում է նաև նպաստավոր մակրոպայմանների մասին, քանի որ անբարենպաստ մթնոլորտում դա իսկապես անհրագործելի է: Հետևաբար՝ միկրոնակարդակում աճի ներուժի առաջարկությունը կամ մեծացումն անհրաժեշտ է, սակայն բավարար չէ. պահանջվում է նաև համապատասխան միջավայր այդ ներուժի գործադրման ու իրացման համար:

Քննարկվող մոտեցումն օժտված է նշանակալից առավելությամբ՝ տնտեսական աճի խթանման ու կարգավորման քաղաքականությունը բխեցնել գործարար միջավայրի բարելավման հիմնախնդրից: Դրա լուծման տիրույթում ներառվում են ինչպես անհարկի սահմանափակումների, խտրական անհավասարության պայմանների և խոչընդոտների հաղթահարումը, այնպես էլ նպաստող ու խթանող կարգավորումները: Այս հարցում հաջողության հասնելու ծանրակշիռ երաշխիք կարող է լինել հետևյալ ուղեցույցի ընդունումը. գործարար միջավայրի բազմապիսի պայմանների մի խմբի մասնակի բարելավումը դեռևս չի նշանակում խնդրի սկզբունքային լուծում, քանի որ այդ պայմանները կազմավորում են հավաքածու՝ սուբյեկտների կողմից ընկալվելով որպես փոփոխացնող: Այսինքն՝ միայն ամբողջության մեջ դիտարկելիս է վերջնականորեն պարզվում պայմանների նպաստավոր կամ աննպաստ լինելը. Եթե մի շարք կարևոր դեպքերում նույնիսկ զգալի բարելավում արձանագրվի, սակայն որոշ պայմաններ շարունակեն անհաղթահարելի արգելք ներկայացնել, ապա ընդհանուր իրադրությունը, փաստորեն, էապես չի փոխվի:

Շարադրվածի հիման վրա ընդհանուր գծերով ներկայացնենք հասարակության և տնտեսական համակարգի տարբեր տիպերի պարագայում տնտեսական աճի ու զարգացման իրողությունները, օրինաչափությունները, հետևաբար նաև հեռանկարները: Համեմատական այդպիսի դիտարկման համար առկա է տարբեր երկրների տևական փորձով հաստատված մի շարք տարբերակների, ինչպես նաև դրանց զանազան գուգորդումների լայն ընտրանի: Այս հարցում յուրաքանչյուր երկրի առաջադրվում է համարժեք ընտրության մարտահրավեր, որին դիմագրավելը շատ դժվար է, սակայն հնարավոր՝ ճիշտ ռազմավարության մշակման և հաստատական իրագործման դեպքում:

Տնտեսական աճի որակի ինաստով առավել բարձր չափանիշներ ապահովում են այն երկրները, որոնք ծևավորում ու զարգացնում են ազատ ձեռնարկատիրության բաց, մրցակցային և արդյունավետ համակարգ: Դա տեղի է ունենում իրավական պետության և շուկայական մեխանիզմի գործառությունների համապատասխան «դերաբաշխնան», դրանց համադրման, ինչպես նաև պատշաճ կատարման շնորհիվ: Իհարկե, բավականին տևական տպավորիչ տնտեսական աճ արձանագրվել է նաև վարչահրամայական տնտեսա-

կարգում, սակայն դա եղել է առավելապես էքստենսիվ՝ այլընտրանքներին որակական բնութագրերով բազմակի զիջմամբ:

Տնտեսական աճի գործոնների, ընթացքի և որակական արդյունքների առումով կան նշանակալից տարբերություններ առանձին տնտեսակարգերի և ազգային տնտեսության տիպային մոդելների միջև, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի ներքին դինամիկայի տիրույթում: Միաժամանակ, առկա է այն ընդհանրությունը, որ զուտ գործառությային տեսակետից գործում են միևնույն միջնորդավորող մեխանիզմները: Դրանցից հատկապես որոշիչ են՝ ա) պետության մասնակցությունը. հատկապես նախորդ դարակեսից հետո արձանագրված բոլոր տնտեսական «հրաշքներում» պետական քաղաքականությունը, դրա կազմակերպող, համախմբող, աջակցող և ուղղորդող դիրքորոշումը եղել է ծանրակշիռ, բ) առողջ ծերարկատիրական ոգին. մարմնավորված է հանրօգուտ արտադրողական գործումներության հարածուն արդյունքներում, գ) իրական մասնավոր ներդրումները. ծավալը, դինամիկան, ուղղությունները, կուտակման նորման և այլն, դ) խնայողությունների դրդապատճառները, աղբյուրները, չափերը, դրանք ներդրումների փոխակերպելու եղանակները, ե) դինամիկ գիտական և տեխնոլոգիական նորածությունները, դրանց նկատմամբ գործարար հատվածի ընկալունակությունը, կիրառման ու տարածման հակումը, զ) աշխատողների մասնագիտական որակավորման մակարդակը, արդյունավետ և բարձր գրաղվածությունը՝ մանավանդ որպես ներգրավող, մասնակցային տնտեսական աճի (inclusive growth) նախադրյալ ու երաշխիք, ի) ամբողջական պահանջարկի և դրա առանձին քաղադրիչների խթանիչ ներուժի օգտագործումը և դրանց արդյունավետ մեծության ապահովումը:

Տնտեսական աճի որակի համատեքստում կարևոր է նաև արդի տնտեսության բնորոշ հատկանիշների հաշվառումը: Հիմնականում նկատի են առնվազագույն հետևյալ իրողությունները՝ ա) տնտեսությունը պարփակված չէ զուտ տնտեսական գործոնների փոխազդեցությամբ. գործում է նաև բնական և սոցիալական միջավայրերում, ինչն անխուսափելի է դարձնում տնտեսական և ոչ տնտեսական բազմապիսի գործոնների բարդ ներգործությունը միմյանց վրա՝ պայմանավորելով հետադարձ կապերի ազդեցիկ դերը, բ) տնտեսությունը մշտապես կրում է որոշակի փոփոխություններ, որոնց զգակի մասը անկանխատեսելի կամ հանկարծահաս է՝ պայմանավորված անորոշությամբ, ցիկլային (պարբերական) շրջադարձերով ու տատանումներով, գ) տնտեսությունը հիմերցիոն համակարգ է, դրանում առկա են զարգացման հետագծից կախվածություն, կայունարար մեխանիզմներ, կուտակային (կումույսատիվ) գործնարարությունը, որոնք զգալիորեն պայմանավորում են էկույուցիոն տրենդը, դ) տնտեսությունը սպոնտան (ինքնաբերական) կարգ է, որին ներհատուկ են մասնակիցների ազատ կամքի բնական մղումներ, տարաբնույթ հարմարվողական մեխանիզմներ, ե) տնտեսությունը ստոխաստիկ համակարգ է, ինչն առանձնապես ցայտուն դրսնորվում է այնպիսի գործնարարությունների միջոցով, որոնց պարագայում տնտեսական համակարգի վարքագիծը լիովին կանխորշված չէ և պայմանավորվում է նաև հավանականային բնույթի պատահական փոփոխականներով, զ) տնտեսությունը մարդկային համագործակցության հիմնարար ոլորտ է, հետևաբար՝ սիներգետիկ համակարգ՝ ինքնակազմակերպման այնպիսի ներուժով և դրա իրացմամբ, որի դեպքում վերջնական արդյունքների բարելավումը, ընդհուպ նշանակալից հաջողությունների հասնելը տեղի է ունենում համագործակցության շնորհիվ:

## Տնտեսական աճի որակի չափանիշների շուրջ

Տնտեսական աճի՝ վերը ներկայացված որակի հիմնական բաղադրիչները միաժամանակ կարող են ունենալ չափանիշի կարգավիճակ, կամ էլ տվյալ բաղադրիչից կարելի է բխեցնել ու ձևակերպել համապատասխան չափանիշը: Ուստիև՝ խուսափելով անհարկի կրկնությունից, քննարկենք տնտեսական աճի որակի գնահատման մյուս չափանիշները:

Ունիվերսալ բնույթի չափանիշ կարելի է համարել ծախս–օգուտ վերլուծությունը: Տնտեսական աճը նույնաեն անհրաժեշտ է ներգրավել նշված շրջանակի մեջ, քանի որ դրան բնորոշ են ոչ միայն օգուտներ, այլև համապատասխան ծախսային բեռ, որոնց համադրումը ցույց է տալիս տվյալ աճին հասնելու գինը: Պարզ է, որ տնտեսական աճի որակն ապահովում ու հետագայում բարձրանում է այն դեպքում, եթե նախ ստացվում են զուտ օգուտներ, ապա դրանք աճում են: Ուստի ամեն գնով տնտեսական աճի ապահովումը չի կարող ընդունելի մոտեցում լինել: Այսպես՝ եթե ծախսային բեռը գերազանցում է օգուտները, ապա զուտ վնասը բնութագրում է մակրոտնտեսական անարդյունավետության առկայությունը, ինչը համատեղելի չէ աճի որակի հետ: Գործնականում հաճախ աճի փաստն ինքնին ներկայացվում է իրեն զուտ օգուտ, ինչը հիմնազորկ է ծախսերի անտեսման պատճառով: Իհարկե, ընդունելի ճշտությամբ դրանց հաշվառումը բարդ խնդիր է, քանի որ, տնտեսագիտական տրամաբանության պահանջներով, անհրաժեշտ է գնահատել ոչ միայն տնտեսական, այլև ոչ տնտեսական բնույթի ծախսերը, ոչ միայն ընթացիկ, այլև հետևանքների հետ կապված ապագա ծախսերը: Նույն այդ մոտեցմանք ենթակա են գնահատման նաև տնտեսական աճի փաստացի ու հնարավոր օգուտները:

Տնտեսական աճի որակի հաջորդ չափանիշը շաղկապված է բնապահպանական գործոնի հետ՝ սկսած աճի գործընթացում կլանվող ու սպառվող բնական պաշարներից մինչև բնության աղտոտումը և կլիմայի մարդագին (անտրոպոգեն) վատթարացումը: Այս ամենի հետևանքով քայլայվում է կենսամիջավայրը՝ ոչ միայն զգալիորեն նվազեցնելով բարեկեցության մակարդակը, այլև ահազնացնելով գոյապահպանությանն ուղղված սպառնալիքը: Վերջինիս թուլացման, հետագայում չեղոքացման հնարավորությունը շաղկապվում է, այսպես կոչված, «կանաչ տնտեսության», «կանաչ զարգացման» կամ «կանաչ աճի» հետ: Դա ենթադրում է բնապահպանական բարձր գիտակցության առկայություն՝ բնության գիշատչական շահագրծման բացառում, մասնավոր հատվածական շահերի նկատմամբ հանրային շահի առաջնայնության ապահովում, հումքի մեծաքանակ արտահանման փոխարեն առավելապես վերամշակման արտադրությունների կազմակերպում:

«Կանաչ աճի» կարևորությունն ավելի ու ավելի կմեծանա որպես աճի որակի բարելավման անհրաժեշտ ուղի, քանի որ միայն այդպես կարելի է բավարարել կայուն զարգացման այն պահանջը, ըստ որի ներկայիս հանրությունները պարտավոր են բնօգտագործման նույնպիսի հնարավորություններ պահպանել իրենց իսկ սերունդների համար: Դա նախևառաջ պահանջում է բնապահպանական ներքին օրենսդրության և ընդունված միջազգային համաձայնագրերի պահանջների անվերապահ կատարում: Տվյալ ոլորտում առանձնապես տեղին են նաև վերոիիշյալ ծախս–օգուտ վերլուծությունն ինչպես որևէ հանքարդյունաբերական նախագծի համար, այնպես էլ դրա և «կա-

նաչ զարգացման» այլընտրանքային տարբերակների համադրությունը: Որպես բնորոշ օրինակ կարելի է նշել կայացած, հայտնի առողջարանային գոտու մոտակայքում նոր հանքավայրի շահագործումը: Նման դեպքերում ի սկզբանե առկա են որոշակի անհամատեղելիություն, տարբեր շահերի բախում և այլն: Որոշումներ ընդունող լիազորված մարմինները պատասխանատու են դրանց հիմնավորվածության համար, որի շրջանակում ներառվում է այն հարցի սպառչի պատասխանը, թե արդյոք հանքավայրի շահագործումը տեղի չի<sup>11</sup> ունենա առողջարանային գոտու վերացման և շաղկապված այլ կորուստների գնով:

Տնտեսական դիմամիկայի ու դրա որակական բնութագրերի տնտեսագիտական խոր վերլուծության, առկա իրադրության բազմակողմանի համարժեք գնահատման և արդյունավետ տնտեսական քաղաքականության մշակման համար անհրաժեշտ է վիճակագրական համապատասխան տվյալների արժանահավատ բազա: Մի հիմնախնդիրն այն է, որ տնտեսական աճը չափվում է ՀՆԱ-ի հիման վրա, ինչը կապված է մերոդաբանական որոշ հարցերի հետ: Այսպես՝ հայտնի է, որ ՀՆԱ-ն նախատեսված չէ բարեկեցության փոփոխությունն ուղղակիորեն արտահայտելու համար, քանի որ, իբրև բարեկեցության չափման ցուցանիշ, այն ունի խիստ խոցելի կողմեր: Ուստի, բարեկեցության նակարդակի, դրա տարբերակված վիճակի և դիմամիկայի բնութագրման նպատակով մշակվում են մի շարք այլընտրանքային մոտեցումներ և ցուցանիշներ<sup>11</sup>:

Տնտեսական աճի որակի վերլուծության հետ ուղղակիորեն կապված մյուս հիմնախնդիրը վերաբերում է արտադրողականության ցուցանիշների վիճակին ու դիմամիկային: << Վիճակագրական տարեգրքերը ներառում են ՀՆԱ դիմամիկ շարերը և բազում այլ տվյալներ, սակայն չեն պարունակում աշխատանքի ինչպես ընդհանուր, այնպես էլ ըստ ճյուղերի արտադրողականության ցուցանիշները: >> Հավանաբար, եղած տվյալներով կարելի է դրանք հաշվարկել: Սակայն անհրաժեշտ է, որ << ԱԿԾ-ը վերականգնի նշված ցուցանիշների վիճակագրական հաշվառումը և հրապարակումը, ինչը նախկինում մեծապես կարևորվել է:

Տնտեսական աճի որակի բարեկավման առումով որոշիչ են գիտատեխնիկական նորամուծությունները: Այդ իմաստով, որակի կարևոր չափանիշներից է դրանց մասնաբաժննը ՀՆԱ-ում, ինչպես նաև դրա հավելաձի մեջ: ՀՆԱ-ում գիտատեխնիկական աշխատանքների ծավալի չափազանց փոքր հարաբերական ցուցանիշը վկայում է, որ գիտական արդյունքի նկատմամբ պետական ու գործարար հատվածների պահանջարկը խիստ թույլ ու անբավարար է: Դա նշանակում է նաև, որ պատշաճ չի ծևավորվում և իրացվում ներծին (էնդոգեն) աճի ներուժը, որի նշանակալից առանձնահատկություններից մեկը մասշտաբի աճող հասույցի հնարավորության ընձեռումն է. թեկուզ ժամանակավոր լինելու դեպքում այն կարող է էապես բարձրացնել թողարկման և դրա ընդլայնման որակական ցուցանիշները:

Ինչպես նշվել է, տնտեսական աճի որակի բնութագրման համար կարևոր են համապատասխան միջազգային համեմատությունները: Ըստ դիմամիկայի դրանց պարբերական կատարումը թույլ կտա դիտարկել քանակական փոփոխություններից որակականին անցման օրինաչափ գործընթացի

<sup>11</sup> Տե՛ս Stiglitz J., Sen A., Fitoussi J., Mismeasuring Our Lives: Why GDP Doesn't Add Up. New Press, 2010, 176 էջ:

փուլերը: Այսպես՝ կարելի է առանձնացնել մի շարք համադրումներ մի կողմից՝ տվյալ երկրի բացարձակ ու հարաբերական ցուցանիշների (*ՀՆԱ ծավալ, մարդաշնչի հաշվով մեծություն, աճի տեմպեր և այլն*), մյուս կողմից՝ համաշխարհային, տարածաշրջանային, այս կամ այն դասակարգմանք տարբերակված երկրների խմբերի, ինչպես նաև **ԱՊՀ**, մերձբալթյան, արևելաեվրոպական երկրների համանուն ցուցանիշների միջև: Մասնավորապես՝ համաշխարհային թողարկումը մեկ մարդու հաշվով կազմում է 10 հազ. դոլար (70 տրլն համընդգրկուն *ՀՆԱ-ի* և 7 մլրդ բնակչության դեպքում): Վերջերս Հայաստանը մարդաշնչի ցածր եկամտով երկրների խմբից անցել է միջին եկամտով երկրների ստորին տիրույթ, սակայն դեռևս զգալիորեն զիջում է նշված ցուցանիշին: Այդ առումով, համեմատության տրամաբանությունն այն է, որ պարզվի՝ դիմամիկայում արդյոք կրճատվո՞ւմ, թե՝ մեծանում են տարբեր երկրների ցուցանիշների միջև առկա խզման չափերը, և յուրաքանչյուր դեպքում դա ինչ արագությամբ է տեղի ունենում:

**АТОМ ВАРДАНЯН**

Доцент кафедры „Экономической теории“ АГЭУ,  
кандидат экономических наук

**Качественные характеристики экономического роста в контексте развития.**- В статье представлена концептуальная разработка, в пределах которой обеспечивается качество экономического роста. Начиная с краткого обзора рамок проблемы, автор затем представляет различные качественные компоненты экономического роста. Он предлагает подход к качеству экономического роста, который совместим с развитием, понимая развитие в его современном глубинном смысле. В статье также рассмотрены типичные черты общества и экономической системы, которые в значительной мере детерминируют качество роста. Особую важность имеют микроэкономические основания экономического роста. С этой точки зрения экономический рост интерпретирован как совокупный исход агрегирования на самом деле различных, т.е. растущих, падающих или неменяющихся динамик на микроуровне (микродинамики). Намечены некоторые основные критерии качества экономического роста.

**ATOM VARDANYAN**

Associate Professor at the Chair  
of „Theory of Economics“ at ASUE,  
PhD in Economics

***Qualitative Characteristics of Economic Growth in the Context of Development.***- The article provides a conceptual framework within which the quality of economic growth is ensured. Starting with a brief overview of the problem's scope, the author then presents different qualitative components of economic growth. He suggests an approach to the quality of economic growth which is compatible with development, conceiving the latter in its modern in-depth sense. Typical features of society and economic system which considerably determine the quality of growth are also examined in this article. Special importance is given to microeconomic foundations of economic growth. From that standpoint economic growth is interpreted as a gross outcome of aggregation of actually different - rising, declining, or non-changing - dynamics on a micro-level (micro-dynamics). Some basic criteria of the quality of economic growth quality are outlined.



## ՄԱՆՈՒԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի  
ղոցենտ, տնտեսագիտության թեկնածու

### ՏՆՏԵՍԱԿԱՆ Ա՞Ճ, ԹԵ՞ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՆՈՐ ՄՈՂԵԼԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

**Զարգացումը հաճախ նույնացվում է տնտեսական  
զարգացման, իսկ տնտեսական զարգացումը, իր  
հերթին՝ տնտեսական կամ ուղղակի աճի հետ<sup>1</sup>:**

Ոռքերտ Զամբերս

Յուրաքանչյուր անսովոր տնտեսական ձգնաժամ (նախորդ՝ 2008-2009 թթ. համաշխարհային տնտեսական ձգնաժամը կարելի է հենց այդպիսին համարել) անխուսափելիորեն հանգեցում է տնտեսական քաղաքականության հիմքերի վերահմաստավորման: Այդպես է եղել 1929-1933 թթ. ձգնաժամից հետո, երբ դասական տնտեսագիտական մտածելակերպն իր տեղը գիշեց քեյսականությանը: Այդպես է եղել անցած դարի 70-ականներին, երբ լճացումը (ստագֆլյացիա) ծնեց նորլիբերալիզմի զաղափարներ: Այդպես է նաև այսօր. բազային տնտեսագիտական ընթանումների վերանայման անհրաժեշտությունը դարձել է օրակարգային հարց:

Նախորդ տնտեսական ձգնաժամը ցույց տվեց, որ այնպիսի երևոյթ, ինչպիսին տնտեսական պարբերաշրջանն է, չի անհետացել, իսկ «Մեծ դադարի» (Great Moderation)<sup>1</sup> մինչզգնաժամային 25 տարիների շրջանը, երբ բազային մակրոտնտեսական ցուցանիշների (աճի տեմպեր, ինֆլյացիա և այլն) տատանումներն էականորեն նվազեցին, անցել է: Ավելին, ձգնաժամերի ի հայտ գալու հաճախականությունը տնտեսական կյանքի համար դարձել է պարտադիր պայման:

<sup>1</sup> Տես Chambers R., Ideas for development: reflecting forwards. IDS Working Paper 238, էջ 2:  
<http://opendocs.ids.ac.uk/opendocs/bitstream/handle/123456789/669/Wp238.pdf>

Իրական տնտեսությունը հեռու է հավասարակշռության վիճակից, և շուկան չի կարող հասարակությանը տրամադրել իր գործունեության հմարավոր արդյունքներից լավագույնը. աշխարհն ինչպես զարգանում էր, այնպես էլ շարունակում է զարգանալ անհամաշաբի: Գրեթե բոլոր զարգացած երկրների ՀՆԱ աճի տեմպերի անկնան պատկերի համեմատությամբ զարգացող երկրների տնտեսական աճի շարժմանցն ավելի քան հուսադրող էր: Բոլոր երկրներում (բացառությամբ առավել աղքատների), որտեղ վերջին 20 տարիներին արձանագրվել է տնտեսական աճ, ավելացել է բնակչության ունեցվածքային բևեռացումը: Ծայրահետ անհամաշաբի է աճել տնտեսական ակտիվությունը ազգային տնտեսությունների շրջանակներում: Անհավասար են ավելացել նաև ընթացիկ եկամուտները:

Եթե իրական կյանքում չկան հավասարակշռություն, կայունություն, հավասարություն, իսկ ճգնաժամերը ոչ մի կերպ չեն անհետանում, ապա ինչո՞ւ պատասխանատու պետական առաջնորդները, քաղաքագետները, տեսաբանները, ֆինանսիսները և բանկիրները գործածում են այնպիսի եզրույթներ, որոնք չեն բնութագրում և չեն կարող բնութագրել իրականությունը: Այսպես օրինակ՝ 2009 թ. սեպտեմբերին (այսինքն՝ տնտեսական ճգնաժամի գագաթնակետին) տնտեսապես ամենազարգացած երկրների առաջնորդները հայտարարեցին, որ իրենք ընդունում են «աճ առանց պարբերաշրջանների», ինչպես նաև «համաշխարհային տնտեսության վճռական, հավասարակշռված և կայուն աճ»<sup>2</sup>: 2011 թ. հունիսին Քրիստին Լազարով Արժույթի միջազգային իիմնադրամի դեկավարի պաշտոնում ընտրվելուց հետո հայտարարեց, որ «ԱՄՀ-ը պետք է պահպանի իր արդիականությունը, ձկուն կերպով արձագանքի իր անդամ երկրների կարիքներին, լինի արդյունավետ և օրինական, որպեսզի ապահովի ավելի համոզիչ ու կայուն աճ, մակրոտնտեսական կայունություն և լավագույն ապագա բոլորի համար»<sup>3</sup>: Նախկին Խորհրդային Միության որոշ երկրների պատասխանատու քաղաքագետներ նույնպես մտորում են «տնտեսության կայուն առաջընթաց զարգացում» հասկացության շուրջ, իսկ տնտեսագետները «ինչ անել» հարցի պատասխանի փնտրություններում առաջարկում են ընտրել «աճի նոր մոդել, որը կինի կայուն և բավարար դինամիկ»<sup>4</sup>: Բայց այնպիսի երևոյթ, ինչպիսին «կայուն առաջընթաց զարգացումն» է, ուղղակի գոյություն չունի:

Տնտեսագիտական բանավեճերի ճնշող մեծամասնությունը դեռևս ընթանում է կամ նորդասական տնտեսագիտական տեսության, կամ նորքեյնսականության շրջանակներում: Սակայն ներկայացվում է այնպես, որ, մնալով համոզմունքների մոդելի շրջանակներում, մենք ի վիճակի չենք լինում ոչ պատշաճ կերպով ձևակերպելու, ոչ լուծելու հասարակության առջև ծառացած խնդիրները: Արդյունքում՝ ավարտված համաշխարհային տնտեսական ճգնաժամը 2008-2009 թթ. ակնհայտորեն մերկացրեց ոչ միայն տնտեսագիտության տեսության ճգնաժամը, այլ նաև տնտեսական քաղաքականության անկատարությունը:

Վերջին ճգնաժամի հետևանքներից մեկը դարձավ փորձառական գիտելիքների վրա հիմնված այլընտրանքային (նոր) տնտեսագիտական մտածե-

<sup>2</sup> St. u Leaders' Statement: The Pittsburgh Summit, September 24 – 25, 2009:

<sup>3</sup> <http://www.imf.org/external/russian/np/sec/pr/2011/pr11260r.pdf>. Пресс-релиз № 11/260 (R) для немедленного выпуска от 28 июня 2011 года.

<sup>4</sup> „Վեճություն”, 13.01.2011, 3 (2769).

լակերպի և մոտեցումների նկատմամբ անընդհատ աճող պահանջը<sup>5</sup>: Նոր տնտեսական մտածելակերպի ձևավորման փուլերից է տնտեսական աճի տեսությունից անցումը տնտեսական զարգացման տեսությանը:

Ներկայումս, դատելով առկա անգլալեզու գրականությունից, թեև ները ընթանողաբար մեծանում է պահանջը «զարգացում» հասկացության նկատմամբ, այնուամենայնիվ, զարգացման՝ որպես աճի այլընտրանքային հայեցակարգի ձշգրիտ բնութագրում ուղղակի չկա: Ինչ վերաբերում է հայրենական տնտեսագիտական մտքին, ապա մենք նոյնպես «զարգացում» եզրույթը դեռևս չենք ձևակերպել, իսկ «տնտեսական աճի»՝ որպես որոշակիորեն ընդունելի տարբերակի ձևակերպման փորձերն առայժմ հաջողությամբ չեն պսակվում<sup>6</sup>:

### Տնտեսական զարգացման հայեցակարգի ձևակերպումը

Ի տարբերություն աճի տեսության՝ զարգացման տեսության մշակումը բարդ խնդիր է: Հիմնական դժվարությունն այն է, որ տնտեսական զարգացումը, իր բազմաբովանդակությամբ, վերաբերում է այն խնդիրներին, որոնք շատ գիտությունների ուսումնասիրության առարկան են: Այսպիսվ, ինչպես նկատում է Զ. Բերմանը, «զարգացման հայեցակարգերը հաճախ էին հանդես գալիս մի կողմից՝ որպես շատ անորոշ ընդհանրացումներ, մյուս կողմից, մասնավոր դեպքերի ուսումնասիրության դեպքում, որպես վերլուծական տեսություն»: Այնուամենայնիվ, այսօր արդեն առկա է հետազոտությունների բավարար ծավալ, ինչը կարելի է համարել տնտեսական զարգացման հայեցակարգի ձևակերպման հիմք:

Անգլերենով գրականությունը պայմանականորեն կարող ենք բաժանել 2 հատվածի: Առաջինում կարելի է ընդգրկել այն գրականությունը, որում «զարգացում» և «աճ» հասկացությունների վերլուծություններում չի օգտագործվում «կառուցվածք» հասկացությունը: Որոշ հետազոտողներ կամ ընդհանրապես էական տարբերություն չեն տեսնում «աճի» և «զարգացման» միջև, կամ դրանք կապում են զարգացած կամ զարգացող երկրներում տեղի ունեցող գործընթացների հետ, կամ ենթադրում են, որ աճի և զարգացման աղբյուր կարող են լինել ներծին կամ արտածին գործոնները, կամ էլ դիտարկում են դրանք որպես այլընտրանքային գործընթացներ<sup>7</sup>: Մի շարք հեղինակներ կարծում են, որ «աճի» և «զարգացման» միջև առկա տարբերությունը թաքնված է տնտեսական ընտրության ծավալներում. նրանցից ունաք համարում են, որ առավել մեծ ընտրությունը տալիս է աճը, մյուսները՝ զարգացումը<sup>8</sup>: Ենթադրում է, որ 40-50 տարիների ընթացքում նշված գրականության մեջ տնտեսական աճին և զարգացմանը նվիրված ուսումնասիրություններն էական առաջընթաց չեն ապահովել: Պատճառն այն է, որ առանց

<sup>5</sup> Տե՛ս <http://ineteconomics.org>.

<sup>6</sup> Տնտեսական զարգացման հայեցակարգի բացակայության պայմաններում գրականության մեջ ներուժը կամ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «աճի որակ», աճը որպես «բազմաբովանդակ հասկացություն» և այլն:

<sup>7</sup> Տե՛ս Robert A., Economic Growth and Economic Development: Counterparts or Competitors? Economic Development and Cultural Change, Vol. 28, No. 1 (Oct., 1979), էջ 47-61:

<sup>8</sup> Տե՛ս W. Arthur Lewis, "Is Economic Growth Desirable?" in "The Economics of Development," ed. D. E. Novack and Robert Lekachman, St. Martin's Press, 1964, էջ 11, Bauer P. and Yamey B., The Economics of Underdeveloped Countries, University of Chicago Press, 1957, էջ 151:

**Կառուցվածք** հասկացության օգտագործման հնարավոր չէ կատարել այդ երևոյթների բովանդակալից վերլուծությունը:

Գրականության մյուս հատվածը, որտեղ օգտագործվում է «կառուցվածք» հասկացությունը, իսկ «զարգացումը» և «աճը» արդեն հոմանիշներ չեն համարվում, սկսել է զարգանալ որպես տնտեսական զարգացման տեսական մյուս համարվում: Տնտեսական զարգացման տեսությամբ քաղաքացի գրեթե բոլոր հեղինակների աշխատանքներում պարզորոշ կերպով ներկայացված է «աճ» և «կառուցվածք» հասկացությունների միջև առկա կապը: Հարց է առաջանում. ինչո՞ւ է «կառուցվածք» հասկացությունն այդքան կարևոր տնտեսական զարգացման հայեցակարգի ծևավորման համար: Կարծում ենք՝ այն օգնում է «աճ» և «զարգացում» հասկացությունների ձիշտ տարրերակմանը: Ենելով անհրաժեշտությունից՝ «կառուցվածք» հասկացությունը ներկայացնենք առավել ծավալուն ծևով<sup>9</sup>:

Հայտնի է, որ **կառուցվածք** ասելով հասկանում ենք ամբողջի մասերի (համակարգում՝ տարրերի) ներքին կազմություն, մասերի (տարրերի) կափի համեմատաբար կայուն միջոց, ինչն ամբողջապես բնութագրում է դրանց փոխազդեցությունը: Մեր ուսումնասիրության նպատակից ելնելով ընդգծենք, որ «կառուցվածք» հասկացությանը չենք անդրադարձնա միայն ագրեգացված ցուցանիշների դեպքում, որոնց օգտագործումը հնարավոր է ամբողջ տնտեսության աճի վերլուծության համար, բայց անհնար է տնտեսության զարգացումն ուսումնասիրելիս:

Ամբողջի զարգանալու ունակությունը կախված է ոչ միայն ամբողջի մասերի (տարրերի) ներքին կազմակերպման, այլ նաև ամբողջի (համակարգի) և արտաքին միջավայրի փոխկապվածության բնույթից: Հետևաբար՝ արտաքին միջավայրի փոփոխությունը պահանջում է այս կամ այն համակարգի (ամբողջի) ինչպես գործառույթների, այնպես էլ կառուցվածքի փոփոխություն, և հակառակը՝ փոփոխությունը շրջակա միջավայրում տեղի է ունենում այստեղ գործող համակարգերի ազդեցության հետևանքով:

Բացի այդ, «կառուցվածք» հասկացությունն ունի կայուն և դիմանիկ հայեցակետեր: Առաջին դեպքում դա բովանդակության սահմանման միջոց է, իսկ երկրորդ դեպքում ենթադրում է փոխակերպման կամ զարգացման գործընթաց: Հենց այս հանգամանքն էլ որոշակի արժեք է ներկայացնում. զարգացումն առաջանում է այստեղ, որտեղ տեղի է ունենում ինչպես եղածի վերափոխման, այնպես էլ նոր կառուցվածքների ծևավորման գործընթաց:

Գիտության մեջ տնտեսական զարգացում (ոչ թե աճ) հասկացության ուղղվածության հիմնադիրը համարվում է Յ.Շուլմանը: Ըստ նրա՝ տնտեսության շարժիչը կառուցվածքային տեղաշարժերի գործընթացն է (կամ, ինչպես ինքն է ասում՝ «նոր համակցությունների իրականացումը»)<sup>10</sup>: Շուլմանը տնտեսագիտության մեջ առաջինն է տարրերակել «տնտեսական աճ» և «տնտեսական զարգացում» հասկացությունները, վերջինս կապելով տնտեսության նորարարությունների, կառուցվածքային փոփոխությունների («նոր համակցությունների կենսագործման»), ալիքածն շարժումների (պարբերաշրջանային տատանումների), ինչպես նաև «շարունակական անհավասարակշռության պայմաններում» դրա առկայության հետ:

<sup>9</sup> Հեղինակը չի հավակնում սահմանելու հասկացությունը:

<sup>10</sup> Տես Շուլման Յ., Թеория экономического развития. М., „Директмедиа Паблишинг”, 2008, էջ 159:

«Կառուցվածք» հասկացությունը, ինչպես նաև կառուցվածքի զարգացման և փոփոխության անհամաշափության փոխկապվածության մասին տեսակետը տնտեսագիտական գրականության մեջ ներմուծել է Ս. Ֆաբրիկանտը, որոնք սկսել են ակտիվորեն շրջանառվել: Նա գրում է. «Եթե մենք շեղվենք միջին ցուցանիշներից և ուշադրություն դարձնենք արդյունաբերության մեջ անհատական ճյուղերի մակարդակով տնտեսական ակտիվությանը, ապա կմկատենք տարբեր ճյուղերի արտադրանքների տեմպերի զգալի տարբերությունները: Ժամանակի տարբեր պահերի դրությամբ որոշ ճյուղեր անկում են ապրում, մյուսներն աճ են արձանագրում, և միայն դրանց աննշան քանակությունն է զարգանաւար ընդհանուր միտումին համապատասխան: Աճի տեմպերում առկա այս տարբերություններն ազդում են արդյունաբերական թողարկման կառուցվածքի, տեխնիկական գործընթացների, թողարկվող արտադրանքի տեսականու, ինչպես նաև ըստ ճյուղերի աշխատուժի բաշխման վրա»<sup>11</sup>: Բացի այդ, սկսած Ս. Ֆաբրիկանտի աշխատություններից, ի հայտ եկան մի շարք հրապարակումներ, որոնք նվիրված էին արդյունաբերության զարգացման կառուցվածքի վերլուծությանը: Շումպետերից հետո Ֆաբրիկանտի հրաժարումը ագրեգացված վիճակագրական ցուցանիշների (ինչպիսին է ՀՆԱ-ն) օգտագործումից, ազատեց տնտեսագիտական միտքը՝ այն ուղղելով միջջուղային և ներջուղային համամասնությունների վերլուծությանը:

Զարգացման տեսության ծևավորման հարցում նշանակալի դեր է խաղացել նաև Ն. Կալդորը, ով նույնպես տնտեսական զարգացումը կապում էր տնտեսության ճյուղային կառուցվածքներում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Նա առաջին տնտեսագետներից էր, ով բնութագրեց պարերաշրջանը՝ իհմնվելով ներդրումային գործընթացների և խնայողությունների դիմամիկայի միջև առկա ոչ գծային կապերի վրա<sup>12</sup>:

Տնտեսական զարգացման տեսության ուսումնասիրության համար զգալի արժեք են ներկայացնում Կալդորի հետազոտությունները տնտեսական համամասնությունների դիմամիկայի ոլորտում: Նրա վերլուծությունը ցույց տվեց, որ զարգացման որոշակի մակարդակներում մակրոտնտեսական և առանձին համամասնությունների դիմամիկաները զգալիորեն տարբերվում են: Անկախ այն բանից, թե որքան ճշգրիտ կամ ոչ ճշգրիտ են եղել վերջինիս վերաբերյալ նրա եզրակացությունները, տնտեսության զարգացման մեջ անհավասարակշռության հարցադրումը ինքնին բավականին կարևոր է: Քանի որ տնտեսական համակարգի կառուցվածքի առանձին մասերի զարգացումը տեղի է ունենում անհավասարաշափ, ուստի ընդհանուր մակրոտնտեսական դիմամիկան (աճը) պետք է ուղեկցվի որոշ կառուցվածքների փոփոխություններով և մյուսների հարաբերական կայունությամբ:

Անգնահատելի է զարգացման տեսության մեջ Ս. Կուզնեցի ներդրումը: Զարգացնելով «ժամանակակից տնտեսական աճի» տեսությունը՝ նա զգալիորեն հարստացրեց զարգացման տեսությունը: Դա ամենից առաջ կապված է նրա՝ կառուցվածքային տեղաշարժերի և աճի միջև առկա հարաբերությունների վերլուծության, ինչպես նաև տնտեսական աճի տեսությունում ինստիտուտների խաղացած դերի գնահատականի հետ: Կուզնեցի կատարած

<sup>11</sup> Fabricant S., The Output of Manufacturing Industries: 1899-1937, New York, „NBER”, 1940, էջ 9:

<sup>12</sup> Տե՛ս Kaldor N., Causes of Growth and Stagnation in the World Economy, Cambridge, Cambridge University Press, 1996, էջ 40:

լայնածավալ փորձառական հետազոտություններն ընկած են հետևյալ եզրահանգումների հիմքում։ նախևառաջ՝ բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների և արտադրողականության աճը տնտեսությունում ենթադրում է կառուցվածքային փոփոխություններ։ Երկրորդ՝ տնտեսական աճը և դրա կառուցվածքում տեղի ունեցող փոփոխություններն ուղեկցվում են «սոցիալական և գաղափարախոսական կառուցվածքների բացառապես կարևոր փոփոխություններով»<sup>13</sup>։ Ավելին, Ս. Կուզնեցը գրում է. «.... որոշ կառուցվածքային փոփոխություններ (ընդ որում՝ ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական իմաստիտուտներում) այնքան անհրաժեշտ են, որ առանց դրանց տնտեսական աճ ուղղակի հնարավոր չէ»<sup>14</sup>։ Երրորդ՝ ըստ Կուզնեցի, ժամանակակից պայմաններում տնտեսական աճը որոշակի գործողություն է պահանջում պետության կողմից, որը «պետք է սոցիալապես անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման և պահպանման համար ձեռնարկատիրոջ դեր կատարի»<sup>15</sup>։ Չորրորդ՝ մի երկրի տնտեսության աճը ազդեցություն է ունենում այլ երկրների վրա։

Չի կարելի չնշել նաև Լ.Պազինետիի ներդրումը տնտեսական մոդելի ստեղծման մեջ, որը կապում է կառուցվածքային փոփոխությունները և տնտեսական աճը։ Առավել արժեքավոր է պահանջարկի կառուցվածքի, եկամուտների կառուցվածքի և թողարկման աճի տեմպերի միջև կապի մասին նրա հայեցակարգը։ Լ.Պազինետին գրում է. «Արտադրողականության և եկամուտների աճը միևնույն երևույթի դրսևորումներից է։ Քանի որ դրանցից առաջինինը ենթադրում է երկրորդի աճը, իսկ երկրորդի կառուցվածքը կանխորշում է առաջինի պահանջվածությունը, ապա մեկը չի կարող դիտարկվել առանց մյուսի»<sup>16</sup>։ Հետևաբար, ըստ Պազինետիի, թողարկման աճի ձյուդային կառուցվածքը կախված է մի կողմից՝ ձյուդային արտադրողականության աճի տեմպերում առկա տարբերությունից, մյուս կողմից՝ պահանջարկի աճի կառուցվածքից։

Ամերիկացի տնտեսագետ Հ. Չեներին տնտեսական զարգացումն ուսումնասիրել է որպես «տնտեսության կառուցվածքում փոխկապակցված փոփոխությունների համակարգ, որոնք անհրաժեշտ են անընդհատ աճի համար»<sup>17</sup>։ Վերլուծելով արդյունաբերությունում կառուցվածքային տեղաշարժերի և տնտեսական աճի տեմպերի միջև եղած կապը՝ նա ցույց տվեց, որ արդյունաբերական կառուցվածքի վերափոխումը (օրինակ՝ արտադրության միջոցներ արտադրող ձյուդերի մասնաբաժնների աճը) հանգեցնում է ձյուդի կապիտալատարության աճի, արդյունքում՝ աշխատանքի արտադրողականության ընդհանուր մակարդակի աճի։

Հիշատակության են արժանի նաև հայտնի տնտեսագետ Ս. Սիրկինի՝ տնտեսական զարգացման տեսությանը նվիրված աշխատությունները։ Գնահատելով տնտեսության կառուցվածք հասկացության կարևորությունը՝ նա գրել է. «Կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրությունն անհրաժեշտ

<sup>13</sup> Kuznets S., Prize Lecture. Lecture to the memory of Alfred Nobel, December 11, 1971. [http://nobelprize.org/nobel\\_prizes/economics/laureates/1971/kuznets-lecture.html](http://nobelprize.org/nobel_prizes/economics/laureates/1971/kuznets-lecture.html).

<sup>14</sup> Kuznets S., Economic Growth of Nations: Total Output and Production Structure. Cambridge, 1971, p. 348.

<sup>15</sup> Handbook of Development Economics. Elsevier. 1995, V. 1, p. 265.

<sup>16</sup> Pasinetti L., Structural Change and Economic Growth, Cambridge, Cambridge University Press, 1981, p. 69.

<sup>17</sup> Chenery H., Structural Change and Development Policy. Oxford University Press for the World Bank: 1979, New York , p. XVI.

է, քանի որ դրանք ներկայացնում են ժամանակակից տնտեսական աճի առանցքը, այդ իսկ պատճառով համարվում են զարգացման բազմակողմանի տեսության ծևավորման բաղկացուցիչ մասը»<sup>18</sup>: Մ. Սիրկինը մեկն էր այն փոքրաթիվ տնտեսագետներից, ով հանգեց եզրակացության, որ հավասարակշռության պայմաններում զարգացումն անհնար է: «Հավասարակշռության բացակայության պայմաններում աճին նպաստում են կապիտալիահատույցը տնտեսության տարրեր ձյուդերում, ռեսուրսների բաշխումն այն ձյուդերում, որտեղ արտադրողականությունն ավելի բարձր է: Անհավասարակշռության պայմաններում կառուցվածքային տեղաշարժերը դառնում են աճի հնարավոր աղբյուր, եթե ուղեկցվում են ռեսուրսների առավել լրիվ օգտագործմամբ»<sup>19</sup>:

Վերջին 10 -15 տարիներին հրապարակվում են մեծ թվով աշխատություններ, որոնք ոչ միայն արժարժում են տնտեսական զարգացման տեսության հիմնարար գաղափարները, այլ նաև ցույց են տալիս աշխատանքի արտադրողականության աճի կառուցվածքի և նորամուծությունների ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կապը: Տնտեսական զարգացման վրա կառուցվածքային տեղաշարժերի ազդեցությանը նվիրված անգլալեզու հայտնի աշխատություններից առանձնացվում են Յ. Ֆագերբերգի, Մ. Պենեդերի և Զ. Մետկալֆեի աշխատությունները: Օրինակ՝ Յ. Ֆագերբերգի աշխատություններում վերլուծության է ենթակված աշխատանքի արտադրողականության աճի տեսնպերի և տնտեսությունում կառուցվածքային տեղաշարժերի միջև փոխկապվածությունը, մասնավորապես՝ աշխատանքի արտադրողականության ընդհանուր աճի վրա տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը<sup>20</sup>: Մ. Պենեդերը, ուսումնասիրելով մեզոկառուցվածքների և մակրոտնտեսական գործունեության ցուցանիշների միջև կապը, ցույց տվեց, թե ինչպես են փոխկապված կառուցվածքային տեղաշարժերը և աշխատանքի արտադրողականության աճը<sup>21</sup>: Զ. Մետկալֆենը նախևառաջ հայտնի է աղապտիվ աճի էվոլյուցիոն տեսությանը վերաբերող իր աշխատություններով:

Տնտեսական զարգացման տեսությանը նվիրված գրականությունում գոյություն ունեն զգալի թվով նյութեր, որտեղ քննարկվում են զարգացման խնդիրները բարեկեցության համեմատաբար ցածր մակարդակ ունեցող կամ, այսպես կոչված, զարգացող երկրներում<sup>22</sup>: Դրանք վերլուծում են ոչ միայն տնտեսական կառուցվածքի և աճի փոփոխության խնդիրները զարգացող երկրներում, այլև այնպիսի կապեր, ինչպիսիք են աճը և կրթությունը, աճը և

<sup>18</sup> Syrquin M., Patterns of Structural Change, Handbook of Development Economics. Elsevier, 1995, v. 1, p. 208.

<sup>19</sup> Նոյն տեղում:

<sup>20</sup> Տե՛ս Fagerberg J., Technological progress, structural change and productivity growth: a comparative study, Structural Change and Economic Dynamics, 2000, 11, էջ 393-411: Fagerberg J., Technology and International Differences in Growth Rates, Journal of Economic Literature, 1994, 32: 1147-75: Fagerberg J., Technology and Competitiveness", Oxford Review of Economic Policy, 1996,12: 39-51:

<sup>21</sup> Տե՛ս Peneder M., "Industrial structure and aggregate growth, Structural Change and Economic Dynamics, Elsevier, 2003, vol. 14(4), December, էջ 427-448:

<sup>22</sup> Քանի որ հոդվածը տնտեսական զարգացման մասին է, և վերլուծության է ենթակվում այս հարցին առնչվող գրականությունը, հարկ է հաշվի առնել հետևյալ նկատառումները. զարգացման հայեցակարգը պետք է ծևավորվի անկախ այս կամ այն երկիրի զարգացման մակարդակից, իսկ տնտեսական զարգացման գրականությունը չպետք է սահմանափակվի միայն, այսպես կոչված, development economics-ով:

առողջապահությունը, աճը և աշխատանքային պայմանները, աճը և շուկայական պայմանների փոփոխությունները, աճը և ինստիտուտները: Արդյունքում՝ տնտեսագիտության շրջանակներում ծևավորվեց, իսկ հետագայում առանձնացավ որպես գիտության ենթաբաժնի՝ development economics<sup>23</sup>: Չնայած ուսումնասիրության առարկայի զգալի նեղացմանը, այնուամենայնիվ, այս ենթաբաժնի՝ development economics-ի շրջանակներում ի հայտ եկան մեծ թվով աշխատություններ, որոնք զգալիորեն ընդլայնեցին մեր պատկերացումները այնպիսի երևոյթի վերաբերյալ, ինչպիսին «տնտեսական զարգացումն» է: Նման աշխատանքներ հեղինակեցին, մասնավորապես՝ Զ. Սակուր, Ա. Սենը և Զ. Ստիգլիզը:

Զարգացող երկրներում առկա խնդիրների ուսումնասիրությունը թույլ տվեց մի շարք գիտնականների առաջարելու այնպիսի հաղցեր, ինչպիսիք են համընդհանրացման պայմաններում աղքատության, անհավասարության և տնտեսական աճի փոխկապվածությունները: Այսպիսի բարդ խնդիրներից մեկը կախված է մի կողմից՝ տնտեսական աճի տեմպի և անհավասարության մեծացման, մյուս կողմից՝ աճի և ինստիտուտների փոխկապվածության հետ: Խնդրի էությունն այն է, որ տնտեսական աճի խթանումը առաջ է բերում անհավասարության աճ: Համաշխարհային տնտեսությունում առկա ինստիտուտները միայն ժամանակավորապես են վերացնում այդ խնդիրը: Զ. Ստիգլիզը 2006 թվականին գրել է. «Խաղի կանոնները, որոնք կառավարում են համաշխարհայնացումը, անարդար են և մտածված են այնպես, որ օգուտ բերեն զարգացած արդյունաբերական երկրներին: Իրականում, վերջին ժամանակներում տեղի ունեցած փոփոխությունները որոշ աղքատ երկրների էլ ավելի աղքատացրին»<sup>24</sup>: Արդյունքում ստացվում է փակ շրջան. տնտեսական աճի հայեցակարգի շրջանակներում չի լուծվում անհավասարության խնդիրը, իսկ առկա ինստիտուտների գործունեությունն ուղղված է դեպի տնտեսական աճը:

Տնտեսական զարգացման և ինստիտուտների թեման քննարկվում է նաև Ա. Սենի «Զարգացումը որպես ազատություն» աշխատությունում: Զարգացման տեսության համատեքստում ազատության գաղափարի արծարծումը որոշակի արժեք է ներկայացնում<sup>25</sup>: Ա. Սենի աշխատանքում այդ գաղափարը արտահայտվում է, այսպես կոչված, «լրացման սկզբունքում»: Մասնավորապես՝ «տնտեսական անազատությունը կարող է հանգեցնել սոցիալական և քաղաքական անազատության այնպես, ինչպես սոցիալական և քաղաքական անազատությունը՝ տնտեսական անազատության»<sup>26</sup>: Ըստ Ա. Սենի՝ տնտեսական, սոցիալական և քաղաքական ազատությունները միմյանցից անբաժան են և ծևավորում են ինքնակարգավորվող մեկ միասնական համակարգ:

<sup>23</sup> Ու.Լուիսը առաջարկեց development economics-ի առարկան սահմանել որպես տնտեսական կառուցվածքների ուսումնասիրություն և աղքատ (կամ թոյլ զարգացած) երկրների գործունեություն: Stiu Lewis W., The State of Development Theory. American Economic Review, 1984, March, էջ 1-10:

<sup>24</sup> Stiglitz Joseph E., Making Globalization Work. W. W. Norton & Company, New York, 2006, p. 9.

<sup>25</sup> Ա. Սենը գրում է. «Եթե մեր հետազոտության ելակետը համարվում է ազատության՝ որպես զարգացման գիշավոր նպատակի սահմանումը, ապա հաջորդող վերլուծության խնդիրը ազատության՝ որպես զարգացման գիշավոր գործոնի նկատմամբ մեր դիրքորոշման հետևողականությունը և վստահելիությունն ապացուող փորձառական կապերի բացահայտումն է»: Stiu Sen A., Развитие как свобода. М., „Новое издательство”, 2004, էջ 16:

<sup>26</sup> Сен А., նշվ. աշխ., էջ 26:

Այսպես՝ զարգացման հայեցակարգի ծևավորումը կատարվում է հետևյալ կերպ. եթե ի հայտ է գալիս և սկսում է արդյունավետ օգտագործվել կառուցվածք հասկացությունը, ինարավորություն է ստեղծվում հեռանալու ազրեգացված ցուցանիշներից: Ընդհանուր ձանաչում է ստանում աճի և կառուցվածքային տեղաշարժերի կապը: Առաջանում է ինստիտուտների և զարգացման կապի վերաբերյալ հարցը, իսկ նի շարք աշխատություններում ինստիտուտները համարվում են տնտեսական զարգացման անբաժանելի մասը: Ըստ էության, աճի տեսությունից զարգացման տեսության անցումը ներկայացնում է վերլուծության գերակայությունների փոփոխություն՝ տնտեսական աճից դեպի զարգացում, որտեղ տնտեսական աճը համարվում է ներքին վերափոխումների հետևանք:

Ուսումնասիրվում է տնտեսության զարգացման մեջ անհավասարության հարցը, իսկ աճի տեմպերի անհավասարությունը կապվում է տնտեսական կառուցվածքի փոփոխության հետ: Գրականության մեջ ամենից հաճախ վերլուծության է ենթարկվում միկրոկառուցվածքների, մեզոկառուցվածքների և մակրոտնտեսական գործունեության ցուցանիշների միջև կապը:

Նշված թեմայով գրականության վերլուծությունը բոլոյ է տալիս կատարել մեկ կարևոր եզրահանգում ևս. տնտեսությունը ինքնազարգացող բաց համակարգ է, որը, որպես կանոն, գտնվում է «շարունակական անհավասարակշռության վիճակում»: Հետևաբար՝ զարգացման տեսության ստեղծումը նորդասական տնտեսագիտության շրջանակներում անհնար է: Առանց տվյալ հանգամանքի արձանագրման՝ զարգացման հայեցակարգի մասին խոսելն անհմաստ է. տնտեսական զարգացման տեսությունը չի կարող անցնել աճի տեսության սահմանները:

### **Զարգացման առաջարկվող հայեցակարգը**

Կառուցվածքի կամ միջավայրի հասկացությունը օգնում է մեզ հասկանալ զարգացման էությունը «կոռորդինատների համակարգում»: Տնտեսական աճը և զարգացումը նկարագրվում են ձև՝ բովանդակություն «կոռորդինատներում»: Սակայն տնտեսական զարգացման հասկացությունը ունի ևս մեկ չափիչի կարիք: Տնտեսական զարգացման հայեցակարգը չի հաստատվի, եթե դրան չմիացվի ժամանակի գործոնը<sup>27</sup>: Զարգացման տեսությունում ժամանակի ինտեգրումը մեկ ամբողջության մեջ կապում է քանակական (աճ), որակական (կառուցվածք) փոփոխությունները և գործընթացների դիմամիկայի տատանողական հատկանիշները:


Ի՞նչ է տալիս ևս մեկ չափողականության ավելացումը: Հենց ժամանակի գործոնն է զարգացման հասկացությունը դարձնում բազմաչափ: Առանց ժամանակի գործոնի զարգացման, գործընթաց տեղի չի ունենա, այսինքն՝ զարգացումը ներկայացնում է վիճակագրական վիճակ: Առանց ժամանակի գործոնի, ինարավոր չէ բնութագրել տատանանան երևույթը, հետևաբար՝ բնորոշել կառուցվածքային փոփոխությունները, քանի որ վերջիններս, ըստ էության, յուրաքանչյուր երևույթի մեջ տարբեր տևողություն ունեցող գործ-

<sup>27</sup> Ժամանակի գործոնի ինտեգրումը տեղի է ունենում տևողության և տատանողականության գործընթացների հաշվառման ձանապարհով: Տես՝ Վրեմյա և յանուն ու ժամանակակից պրոցեսս. U-Journal, №1(7), №2(8). [http://archive.u-journal.com/sections/time/1\(7\)/10/](http://archive.u-journal.com/sections/time/1(7)/10/), [http://archive.u-journal.com/sections/time/2\(8\)/179/](http://archive.u-journal.com/sections/time/2(8)/179/)

ընթացներ են: Առանց ժամանակի գործոնի հնարավոր չէ հասկանալ պարբերաշրջանի դերը զարգացման գործընթացում. ժամանակի գործոնը դիմամիկայի տատանողական բնույթի հիման վրա միավորում է համակարգի փոփոխության քանակական և որակական պարամետրերը (այսինքն՝ աճը և կառուցվածքային փոփոխությունները):

Ավելի հստակ՝ հենց պարբերաշրջանի ծկի մեջ է տեղի ունենում ինչպես տնտեսական աճը, այնպես էլ կառուցվածքի փոփոխությունը: Եթե տնտեսական զարգացմանը վերաբերող գրականության մեջ ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում աճի և կառուցվածքի փոփոխության միջև կապը մնում է գրեթե չլուսաբանված: Սակայն հենց պարբերաշրջանի և կառուցվածքի փոփոխությունների միջև կապն է ներկայացնում տնտեսական զարգացման էությունը: Ժամանակի գործոնի միասնացումը զարգացման տեսությանը ստեղծում է ևս մեկ չափում, ինչը նպաստում է աճի ու կառուցվածքի փոխկապվածության առաջացմանը:

Առաջարկվող հայեցակարգում «զարգացում» հասկացության հիմքում հետևյալ հանգամանքներն են (գծապատկեր 1): **Զարգացումն աշխակացությունների հարաբերությունը բովանդակության և ծկի հարաբերությունն է:** Ընդ որում, աճը զարգացման արտահայտման ծներից մեկն է: Զարգացման արտահայտման մեկ այլ ձև է համարվում համակարգի կառուցվածքի փոփոխությունը: Զարգացումը միշտ տեղի է ունենում անհավասարաչափ. այդպիսին է զարգացման անհավասարաչափության օրենքը: Ընդ որում, անհավասարաչափությունը հանդես է գալիս ինչպես իբրև ամբողջի առանձին մասերի, այնպես էլ ամբողջ համակարգի զարգացման անհավասարաչափություն: Վերջինս ամբողջ համակարգի տատանողական զարգացման օրենքն է:



**Գծապատկեր 1. Կառուցվածքի փոփոխությունը և աճը որպես զարգացման արտահայտման ծներ**

«Աճ» և «զարգացում» հասկացությունների ընկալումն էականորեն դյուրանում է, եթե դրանց վերլուծությունը կատարվում է ծև և բովանդակություն, արտաքին և ներքին, մաս և ամբողջ փիլիսոփայական կատեգորիաների օգնությամբ:

Այսպիսով՝ զարգացումը և աճն ու կառուցվածքի փոփոխությունները հարթերվում են ինչպես բովանդակությունը և ձևը: Զարգացումը (ինքնակարգավորվող բաց համակարգերի դեպքում) տարրողունակ գործընթաց է: Կառուցվածքի փոփոխությունը (ներքին փոփոխություններ) և քանակական աճը (արտաքին փոփոխություններ) զարգացման գործընթացի արտահայտման ձևերից են: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ որևէ բանի աճը ինքնուրույն գործընթաց չէ, այլ տեղի է ունենում համակարգի որակական փոփոխությունների հետ մեկտեղ: Փաստորեն, տնտեսական զարգացումն արտահայտվում է կառուցվածքի և արտաքին քանակական պարամետրերի փոփոխության տեսքով:


Զարգացումը շրջակա միջավայրին հարմարվելու գործընթաց է՝ կառուցվածքի փոփոխության միջոցով: Սակայն, ինչպես նշվեց, կառուցվածք հասկացության մեջ «ծածկագրված» է համակարգի՝ որոշակի գործառնություններ կատարելու ունակությունը: Հետևաբար՝ զարգացումն ինչպես կառուցվածքի փոփոխության գործընթաց, այնպես էլ համակարգի գործունեության ձև է: Ընդ որում, խոսքը վերաբերում է ինչպես ամբողջի, այնպես էլ մասերի գործունեության ձևին: Եթե կառուցվածքի փոփոխությունը վերաբերում է զարգացման ներքին պարամետրերին, ապա աճը համակարգի զարգացման արտաքին ցուցանիշն է: Արտահայտելով զարգացման արտաքին հատկությունները՝ աճը ցույց է տալիս համակարգի զարգացման որակությունը: Կառուցվածքի փոփոխությունները (համակարգի փոփոխության բովանդակային կողմը) օբյեկտիվորեն անհնար են առանց արտաքին փոփոխությունների, այսինքն՝ համակարգի քանակական պարամետրերի փոփոխության: Կառուցվածքի փոփոխությունները և ամբողջի աճը փոխկապված են. ներքինը դաշնում է արտաքին, արտաքինը՝ ներքին: Արտաքին քանակական պարամետրերի փոփոխությունները թույլ են տալիս դատել համակարգում որակական փոփոխությունների առկայության մասին: Բացի այդ, աճը պայմաններ և հնարավորություններ է ստեղծում կառուցվածքի փոփոխության, շրջակա միջավայրին հարմարվելու և, վերջապես, հետագա զարգացման համար:

Շատ կարող է նաև «տնտեսական աճ» հասկացության վերլուծությունը: Աճը, որպես համակարգի քանակական ընդլայնում, ինքնին չի կարող ապահովել ինչպես ամբողջ մարդկության, այնպես էլ ցանկացած ազգային տնտեսության առջև ծառացած տարատեսակ սոցիալական և տնտեսական խնդիրների լուծումը: Ցանկացած խնդիրի լուծում ենթադրում է քանակական փոփոխություններ, հետևաբար՝ կապված է բովանդակության փոփոխության հետ: Այսպիսով՝ տնտեսական աճը ինքնուրույն չի կարող լինել նպատակ: Նպատակ կարող է լինել միայն տնտեսական զարգացումը:

### **Ամբողջի մասերի անհավասարաչափ զարգացումը**

Ամբողջի անհամաչափ զարգացումը երրորդ հանգամանքն է: Այստեղ իր արտահայտությունն է գտնում տնտեսական զարգացումը: Այդ բազմակողմանի կապը նկատվում է գրեթե ամենուր՝ որտեղ խոսքը որևէ օրգանիզմի զարգացման մասին է՝ ներառյալ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացումը: Օրինակ՝ եթե զներն աճում են, ապա դրանք ըստ ճյուղերի, ըստ արտադրողների խմբերի, ըստ տարածաշրջանների անհամաչափ են աճում: Անհամաչափ են աճում մեծածախ և մանրածախ, ներքին և արտաքին

(արտահանման և ներմուծման) գները և այլն: Հետևաբար՝ գնաճը, ընդհանուր առմամբ, կախված է գների կառուցվածքի փոփոխությունից, ինչը ներկայացնում է բովանդակային կողմը: Այսպես օրինակ՝ ԱՄՆ-ում վերջին 40 տարվա ընթացքում գնաճի տեմպերի և հիմնական սպառողական ապրանքների ու ծառայությունների գնաճի տեմպերի ստանդարտ շեղումների միջև կոռպյացիան կազմել է. 1971-1982 թթ.՝ 54%, 1983-1995 թթ.՝ 59%, 1996-2011 թթ.՝ 21% (գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. ԱՄՆ-ում հիմնական սպառողական ապրանքների ու ծառայությունների գների աճի տեմպերը և այդ գների ցուցիչների ստանդարտ շեղումները<sup>28</sup>**

Եթե նկատվում է բնակչության եկամուտների աճ, ապա դա, ըստ բնակչության խմբերի, ըստ ճյուղերի, ըստ սեռատարիքային կազմի, տեղի է ունենում անհամաշաբ: Ընդհանուր առմամբ, եկամուտների աճը կապված է եկամուտների կառուցվածքի փոփոխության հետ: Ընդ որում, տնտեսական գործընթացի մասնակիցների միջև եկամուտների անհամաշաբ բաշխման մեծացումը (Զինի գործակից) բովանդակային կողմն է (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1  
Բնակչության կենսամակարդակի սոցիալ-տնտեսական ինդիկատորները ՀՀ-ում<sup>29</sup>**


Ցուցանիշներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Փաստացի վերջնական սպառման իրական աճի տեմպերը (%)	109.1	109.9	109.0	112.3	104.5	96.0	103.9
10% անենապահով և 10% անենապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը (անգամ)	20.8	17.9	13.9	15.6	14.1	14.5	14.2
Զինի գործակից	0.395	0.359	0.369	0.371	0.339	0.355	0.362

Եթե ՀՆԱ-ն աճում է (կամ նվազում), ապա դա, ըստ տնտեսության ճյուղերի կամ հատվածների, անհամաշաբ է տեղի ունենում: Այսպես օրինակ՝ ԱՄՆ-ում վերջին 30 տարիների ընթացքում (1981-2011 թթ.) ՀՆԱ

<sup>28</sup> St. Bureau of Economic Analysis, USA:

<sup>29</sup> St. ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը (վիճակագրական ժողովածու), ՀՀ ԱՎԾ, Եր., 2012, էջ 52,131, Հայաստանի ազգային հաշիվներ (վիճակագրական ժողովածու), ՀՀ ԱՎԾ, Եր., 2006, 2012, էջ 48, 57:

աճի տեմպերի և կառուցվածքային փոփոխությունների կախվածության բավականին բարձր աստիճան է արձանագրվել: ՀՆԱ աճի տեմպերի և ըստ տնտեսության հատվածների ստանդարտ շեղումների միջև կորելյացիան կազմել է. 1981-1996 թթ.՝ 55 %, 1997-2010 թթ.՝ 77% (գծապատկեր 3): Հետևաբար՝ ՀՆԱ աճը կախված է կառուցվածքի փոփոխություններից: Ի դեպ, վերջինս ԱՄՆ-ի տնտեսության աճի կարևոր գործոններից է:



Գծապատկեր 3. ՀՆԱ աճի տեմպերը և ըստ տնտեսության հատվածների դրանց ստանդարտ շեղումները<sup>30</sup>

Այսպիսով՝ ամբողջի մասերի անհամաչափ զարգացման օրենքը շաղկապում է ամբողջ համակարգի աճի տեմպերը և համակարգում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունները:

Ցանկացած բաց համակարգ զարգանում է իր մասերի անհամաչափ զարգացման միջոցով: Սա կախված է բաց միջավայրերում ոչ գծային և անհամաչափ գործընթացներից<sup>31</sup>: Ընդ որում, միևնույն կառուցվածքում մասերի անհամաչափ զարգացումը պայմանավորված է միջավայրի զարգացման անհամաչափությամբ: Միջավայրի ոչ գծային և անհամաչափ զարգացման պայմաններում համակարգը պետք է հարմարվի փոփոխվող իրադրությանը՝ զարգանալով անհամաչափ և ոչ գծային:

<sup>30</sup> St. Bureau of Economic Analysis, USA:

<sup>31</sup> St. Խակեն Դ., Պրիգոյն Ի., Սիներգետիկա. Մ., 1980:

## Զարգացման տատանողական բնույթը

Համակարգի տատանողական զարգացումը երկարաժամկետում կառուցվածքի տեսանկյունից անկայուն է, ինչն էլ ուղղակիորեն կապված է անհամաշափության գաղափարի հետ: Ինչպես հայտնի է, տնտեսությունն ինքնակազմակերպվող, ինքնուրույն զարգացող համակարգ է: Համակարգի ինքնուրույն զարգացումն ապահովվում է փոփոխվող արտաքին պայմաններին հարմարվելու գործընթացով: Դա ենթադրում է կառուցվածքի հաջորդական փոփոխություն:

Արդեն նշվել է, որ զարգացումը ձևի փոփոխման միջոցով շրջակա միջավայրին հարմարվելու գործընթաց է: Հարմարեցումը տեղի է ունենում նվազագույնը երկու՝ կառուցվածքի և գործառնությունների փոփոխության ճանապարհով: Հետևաբար՝ արտաքին պայմանների փոփոխություններն ու հարմարեցման գործընթացները փոխվածքի հաջորդական փոփոխություն:


Այս կապի մեջ կարելի է առանձնացնել շրջակա միջավայրի զարգացման և ամբողջի մասերի զարգացման անհամաշափություններ: Հենց շրջակա միջավայրի զարգացման ու համակարգի հարմարեցման միջև ոչ միաժամանակությունն էլ ծնում է տատանողական գործընթացներ:

Մեզ շրջապատում են տարատեսակ տատանողական համակարգեր: Տնտեսությունը բացառություն չի կազմում: Դրա զարգացումն ալիքաձև կրկնվող տնտեսական գործընթացների շարք է. պահանջարկի, գների, թուղարկման ծավալների, պահուստների, դրամական զանգվածի, զբաղվածության, տոկոսադրույքների, գործազրկության, կուտակման, կապիտալ ներդրումների, շահույթի նորմաների տատանումներ:

Ինքնազարգացման և ինքնակազմակերպման գաղափարները հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են միաժամանակությունը (սինխրոնիզմ) և տատանումը (ռեզոնանս): Ինքնակազմակերպման գործընթացներում միաժամանակության խնդիրը որոշիչ է տնտեսական զարգացման մասին պատկերացում կազմելու համար:

Զարմանալի ոչինչ չկա, եթե միևնույն ազգային տնտեսության տարբեր հատվածներում տեղի է ունենում գործընթացների միաժամանակացում: Զարմանալին այն է, եթե դա տեղի է ունենում տարբեր ազգային տնտեսական համակարգերում: Հետևաբար՝ միաժամանակացումը ևս պետք է դիտարկվի որպես զարգացման գործընթացի հաստատուն հատկություն: Այս նույն միտքը կարելի է ծևակերպել այլ կերպ՝ ինքնակազմակերպումը և զարգացումը գոյություն ունեն ազգային տնտեսական համակարգերում և դրանց սահմաններից դուրս կատարվող տատանողական գործընթացների միաժամանակացման շնորհիվ:

Հենց աճի տեմպերի միաժամանակացումն է միասնական համաշխարհային շուկայի ստեղծման և համընդհանրացման գործընթացների հիմքում: Օրինակ՝ գծապատկեր 4-ում պարզ երևում է Վերջին 40 տարիների ընթացքում առավել զարգացած երկրների ՀՆԱ աճի տեմպերի միաժամանակացումը: Այս ինաստով, 2008-2009 թթ. տնտեսական ճգնաժամը բացառիկ երևույթ էր. հենց այդ ժամանակահատվածում էր դիտվում համաշխարհային տնտեսության ձևավորման գործընթացի ավարտը:



Գծապատկեր 4. ՀՆԱ ամի տեմպերը մի շաբթ երկրներում՝ հաստատուն գներով (%)<sup>32</sup>

Ոեզնանախ երևությը նույնպես որոշիչ նշանակություն ունի տնտեսական զարգացման գործընթացը հասկանալու համար: Բանն այն է, որ մասերի միավորումը ամբողջի մեջ տեղի է ունենում դրանց ժամանակահատվածների (հաճախականությունների) միաժամանակացման ձանապարհով: Ընդ որում, պարզ կառուցվածքները բարդերի մեջ միավորելու համար կարևոր չափորոշիչ է դրանց տատանման կարողությունը. բարդ կառուցվածքների մեջ միավորվում են միայն այն պարզ կառուցվածքները, որոնց հաճախականությունները համընկնում են:

Այսպես՝ տնտեսական զարգացումը կապված է միաժամանակացման գործընթացի և տատանման հետ: Ժամանակակից տնտեսական համակարգերի էությունը կառուցվածքների բարդագույն միավորումն է. բարդ կառուցվածքը բաղկացած է ավելի պարզերից, վերջինների՝ էլ ավելի պարզերից և այլն:

Ո՞րն է առաջարկվող գաղափարների համակարգի էությունը: Զարգացման անհամաշակության գաղափարը հայտնի է շատ վաղուց, ընդ որում՝ իր փիլիսոփայական, կենսաբանական, տեխնիկական կամ սոցիալ-տնտեսական մեկնաբանություններով<sup>33</sup>: Տատանողական զարգացման գաղափարը նույնպես նոր չէ: Զեկի և բովանդակության կարևոր նշանակությունն ընդգծել էր դեռևս Արիստոտելը, իսկ Կանտի ժամանակներից դրանք սկսեցին կատարել նաև իմացաբանական զարժարություններ: Արևմտյան տնտեսագիտական գրականության մեջ արդեն մշակված է տնտեսական կառուցվածքի փոփոխությունների և ամի միջև կապը: Հարկ է նշել, որ ժամանակի գործոնի ներմուծումը, վերը թվարկված գաղափարների և անհամաշակ ու տատանողական զարգացման բնույթի մտքերի միավորումը միասնական հայեցակարգի մեջ նախևառաջ ձևավորում է քանակից որակին անցման տնտեսական զարգացման ընկալման նոր նոտեցում, երկրորդ՝ հնարավորություն է

<sup>32</sup> Տես <http://www.econstats.com/weo/V002.htm>.

<sup>33</sup> Տես Ալեքսանդր Ռ., Շալիր Ռ., Պsխологиia изобретательского творчества. М., „Вопросы психологии”, 1956, № 6, էջ 37-49:

տալիս ճշգրիտ ձևակերպելու խնդիրները: Օրինակ՝ ինչպե՞ս կարելի է «կառավարել աճը», եթե աճ ասելով հասկանում ենք երկարատև միտում: Ինչպե՞ս կարելի է զարգանալ «առանց պարբերաշրջանների»: Ինչպե՞ս կարելի է խոսել «կայուն աճի» մասին, եթե ռեսուրսները սահմանափակ են: Ինչպե՞ս խոսել զարգացման մասին հավասարակշռության պայմաններում:

Այսպիսով՝ տնտեսական զարգացումն իր արտացոլումն է գտնում ինչպես ամբողջ տնտեսական համակարգի, այնպես էլ նրա առանձին մասերի կառուցվածքի փոփոխության, աճի և անհավասարաչափ տատանողական բնույթի փոփոխությունների մեջ: Տնտեսական զարգացման մասին նման պատկերացումն արտահայտում է «տնտեսական աճի» հայեցակարգի այլընտրանքային էությունը: Այս դեպքում գործ ունենք ամբողջական գաղափարի հետ, որը բնութագրում է իրականությունը և, ըստ էության, փորձառական բնույթ է կրում:

**МАНУК МОВСИСЯН**

Доцент кафедры „Статистики” АГЭУ,  
кандидат экономических наук

**Экономический рост или экономическое развитие? Поиски новой модели.**- В статье предлагается подход, раскрывающий понятие „экономическое развитие”. У экономического развития есть несколько измерений: есть количественное измерение (рост), есть качественное измерение (структура), есть темпоральное измерение (длительность, колебательный характер, неравномерность, гетерохронность). Кроме этого есть также социальное, человеческое, и экологическое измерения. В данной статье делается акцент только на первые три. Отличительной чертой предлагаемого подхода является интеграция фактора времени. Подчеркивается, что интеграция фактора времени в теорию развития связывает в единое целое количественные изменения (рост), качественные изменениями (структура) и колебательный характер динамики процессов, а также делает рост и структуру взаимозависимыми параметрами.

**MANUK MOVSISYAN**

Associate Professor at the Chair of  
„Statistics” at ASUE, PhD in Economics

**Economic Growth or Economic Development? In the Search of New Paradigm.**- The paper is devoted to the approach of revealing the concept of economic development. There are some criteria for economic development: quantitative (growth), qualitative (structure), and fluctuation (duration, asymmetry and periodicity). In addition, there are also social, human and environmental criteria. Only the first three are observed in this paper. Integration of time factor is the distinguishing feature of the proposed approach. It is also pointed out that time factor contribution in the theory of development joins quantitative (growth), qualitative (structure) changes and the dynamics of the periodic nature of the process in one entity as well as it also creates mutual dependence between growth and structure parameters.



## ՖԻՐՈՒԶԱ ՄԱՅԻԼՅԱՆ

ՀՊՏՀ ՄԵՆՏԵՍԱԳԻՌՈՒԹՅԱՆ ՄԵԽՈՒՐՅԱՆ  
ամբիոնի ղոցենստ, ՄԵՆՏԵՍԱԳԻՌՈՒԹՅԱՆ թեկմաժու

# ՍՈՑԻԱԼԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԷՌԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարդու դերի որակական փոփոխությունը հետարյունաբերական տնտեսությունում պայմանավորել է մարդկային կապիտալի վերարտադրության և իրացման պայմանների հիմնախնդիրների նկատմամբ տարբեր տնտեսագիտական ուղղությունների ներկայացուցիչների հետաքրքրության աճ: «Մարդկային կապիտալ» հասկացությունը բավականին արագ մտավ գիտական շրջանառության մեջ: Առաջին անգամ այս եզրույթն առաջարկեց Գ. Բեքերը 1964 թ.` կարևորելով աշխատողի որակական հատկանիշների դերը ստացվող եկամուտների չափի, ինչպես նաև ոչ դրամական օգուտների տեսանկյունից: Այս տեսությունը հետագա զարգացում ստացավ Զ. Մինցերի աշխատություններում: Նա հիմնավորեց մարդկային կապիտալում կատարվող ներդրումների նպատակահարմարությունը, և նրա կառուցած մոդելների հիման վրա հետագայում հնարավոր եղավ գնահատել աշխատողների դիրքը համապատասխան շուկայում՝ կախված ոչ միայն վերջիններիս կրթական մակարդակից, այլ նաև մյուս որակական հատկանիշներից: Նշված հիմնախնդրի քննարկման շրջանակների ընդլայնմամբ պայմանավորված՝ սկսեցին օգտագործել նոր հասկացություն՝ «սոցիալական կապիտալ»:

Այսօր գոյություն ունեն սոցիալական կապիտալի հետազոտության բազում մոտեցումներ, բայց դրանցից ոչ մեկը լայնորեն կիրառելի չէ: Դա, իհարկե, պայմանավորված է հետազոտվող հասկացության «անշոշափելիությամբ», բարդությամբ և քանակական չափման խնդիրներով: Եթե ֆիզիկական կապիտալը մարմնավորված է հիմնական միջոցների մեջ, մարդկային

կապիտալը՝ մարդու մեջ, ապա սոցիալական կապիտալը՝ մարդկային փոխհարաբերություններում:

Սոցիալական կապիտալի էության, կառուցվածքի, գործառույթների վերաբերյալ անուղղակի հիշատակումներ կան Ա. Սմիթի, Կ. Մարքսի, Է. Շյուլքեյմի, Կ. Մենգերի և այլոց աշխատություններում: Այսպես՝ Կ. Մենգերը իր «Քաղաքատնտեսության հիմունքները» աշխատության մեջ առաջարկում էր առանձնացնել բարիքների հատուկ հասկացություն՝ «հարաբերություններ»: Դրանց թվին նա դասում էր ոչ միայն ֆիրմաների աշխատակիցների, մենաշնորհատերների փոխհարաբերությունները, արտոնավկայագրերի վաճառքի իրավունքները, այլ նաև գնորդների փոխհարաբերությունները, սիրային և ընկերական հարաբերությունները<sup>1</sup>:

Առաջին անգամ «սոցիալական կապիտալ» հասկացությունը գիտական շրջանառության մեջ մտավ XX դարի 60-ական թվականների վերջերին Լինդա Դ. Հանիֆենի աշխատություններով: Սոցիալական կապիտալի էության բացատրման համար նա օգտագործեց «ընկերություն», «համակրանք» հասկացությունները և հետազոտեց մարդկանց սոցիալական փոխներգործությունը ընտանիքի և համայնքի շրջանակներում<sup>2</sup>:

Հետագայում սոցիալական կապիտալի հետազոտությունը շարունակեցին կանադացի գիտնականները՝ Ջոն Ռ. Սիլան, Ալեքսանդր Ռ. Սիմք, Էլիզաբեթ Վ. Լուզլին, ովքեր ուսումնասիրում էին քաղաքների սոցիալական կառուցվածքը: Սոցիալական կապիտալի ուսումնասիրությանը վերաբերող աշխատությունների հիման վրա կարելի է առանձնացնել չորս հիմնական հայեցակարգեր: Սոցիալական կապիտալի վերլուծություն համայնքի, ցանցային, նաև համայնքի կազմակերպությունների և սիներգետիկ մոտեցումներով<sup>3</sup>:

Ըստ համայնքի՝ վերլուծվում են տարբեր ակումբների, կազմակերպությունների անդամների միջև ձևավորված փոխհարաբերությունները: Այս շրջանակներում ուսումնասիրվում են սոցիալական կապիտալ կուտակելու համայնքի հնարավորությունները, քննարկվում են դրա դրական և բացասական արտաքին էֆեկտները:

Ցանցային մոտեցման կողմնակիցները՝ Մարիա Ն. Աստոնը, Կ. Նասանսոնը, Մ. Գրանովստերը, Ռ. Բյորտը, Ա. Պորտեսը, կարևորում են մարդկանց միջև հորիզոնական և ուղղաձիգ կապերը համայնքների և ֆիրմաների ներսում:

Տ. Սկոլկովը, Ս. Նեկը, Պ. Կոլիեն, Վ. Խոբեռլին ինստիտուցիոնալ մոտեցմամբ քննարկում են ֆորմալ ինստիտուտների ազդեցությունը տարբեր սոցիալական խմբերի ներսում սոցիալական կապիտալի կուտակման գործընթացի վրա<sup>4</sup>:

Սիներգետիկ մոտեցումը միավորում է ցանցային և ինստիտուցիոնալ հայեցակարգերը: Պ. Էվանսի, Ջ. Իլամի, Դ. Նառայանի, Մ. Վուկովիկի հետազոտությունները վկայում են այն մասին, որ կայուն տնտեսական զարգացման ապահովման համար անհրաժեշտ է գործարարության, պետության և հասարակության արդյունավետ համագործակցություն: Ըստ այս հետազոտողների՝

<sup>1</sup> Տես **Մենգեր Կ.**, Основания политической экономики: //http://ek-lit.agava.ru

<sup>2</sup> Տես **Hanifan L.J.**, The Rular School. Community Center//Annals of the American Academy of Political and Social Science, 1967, էջ 130-138:

<sup>3</sup> Տես **Woolcock M., Narayan D.**, Social Capital: Implications for Development Theory//The World Bank Research Observer, 2000, N15, էջ 225-251:

<sup>4</sup> Տես նոյն տեղը:

րի՝ պետությունը միայն հասարակական բարիքներ ստեղծող չէ, այլ կարող է և պարտավոր է նպաստել տարբեր խմբերի և դասակարգերի միջև տևական դաշինքի ձևավորմանը<sup>5</sup>:

Սոցիալական կապիտալի ուսումնասիրության հարցում մեծ ներդրում ունեն Պ. Բուրյեն և Զ. Կոռլմանը, ովքեր բացահայտել են դրա կուտակման և վերարտադրության մեխանիզմները ընտանիքի, խմբի և հասարակության ներսում:

Այս հասկացության գիտական գործածությունը ժամանակագրական առումով համընկավ նորդասական տեսության «ոսկե դարաշրջանի» և մարդկային կապիտալի տեսության զարգացման հետ: «Կապիտալ» հասկացության ընկալումն ընդլայնվեց Գ. Բեքերի կողմից: «Ետագայում դա «արդիականացրեց» ֆրանսիացի սոցիոլոգ Պ. Բուրյեն: Իր աշխատություններում նա քննադատեց Կ. Մարքսին, ով զգտում էր մարդկային գործունեությունը սահմանափակել միայն տնտեսական ոլորտով և հասարակությունը ներկայացնել որպես արտադրամիջոցների սեփականատերերի և վարձու աշխատողների դասակարգային ընդդիմություն: Ըստ Պ. Բուրյեի՝ մարդու կյանքը չի սահմանափակվում միայն տնտեսական ոլորտով. նա միաժամանակ և՛ քաղաքական, և՛ գիտական, և՛ մշակութային կյանքի մասնակից է:

1972-ին Պ. Բուրյեն իր «Պրակտիկ գործունեության տեսության ուրվագծեր» աշխատության մեջ առաջ քաշեց «մշակութային կապիտալ» հասկացությունը, որն ընդգրկում էր հասարակության վերնախավի այն առավելությունները (գեղագիտական արժեքներ, մարդկանց հետ համագործակցելու ունակություններ, ուսման մեջ բարձր արդյունքների ձեռքբերման շահագործվածություն), որոնք վերջիններս փոխանցում էին իրենց երեխաներին՝ դրանով իսկ նպաստելով նրանց սոցիալական առաջընթացին<sup>6</sup>:

Զերծ բերված հմտություններն ու կարողությունները վերնախավի մատադրության հնարավորություն են տալիս ինքնավերարտադրվելու որպես փակ էլիտար համակարգի տարր: «Ետագայում Բուրյեն ընդլայնեց «սոցիալական կապիտալի» տեսակները՝ ավելացնելով «ակադեմիական իշխանության կապիտալ», «գիտական հեղինակության կապիտալ», «տնտեսական և քաղաքական իշխանության կապիտալ» եզրույթները: Մարդու դիրքը հասարակությունում որոշվում է նրա կողմից կուտակված կապիտալի տարբեր տեսակների ծավալով և կառուցվածքով, այդ թվում՝ սոցիալական կապիտալով:

Սոցիալական կապիտալ ասելով Բուրյեն հասկանում էր նորմերի, կանոնների, կապերի ամբողջություն, որը ձևավորվում էր անհատների փոխգործակցության արդյունքում և հիմնված էր վստահության վրա: Սոցիալական կապիտալը, ձևավորելով սոցիալական ցանցեր, թույլ է տալիս փոխանակել ակտիվներն ու տեղեկատվությունն ավելի արագ և ավելի ցածր գործարքային (տրանսակցիոն) ծախսերով, քան այն դեպքում, եթե դա իրականացվում է միայն շուկայի օգնությամբ<sup>7</sup>:

Սոցիալական կապիտալի ուսումնասիրությունը շարունակեց Զ. Կոռլմանը: Ըստ նրա՝ այս հասկացության էությունը կարելի է բացահայտել՝ ելնե-

<sup>5</sup> Տես նոյն տեղը:

<sup>6</sup> Տես Բուրդե Պ., Социальное пространство и генезис классов. Социология политики. М., 1993, էջ 48:

<sup>7</sup> Տես Բուրդե Պ., Социолог под вопросом. <http://sociologi.narod.ru/lib/PBq.html>. Բուրդե Պ., Формы капитала // Экономическая социология. 2002, N 5, էջ 60-75:

լով անհատի ռացիոնալության և վարքագծի նպատակայնության սկզբունքներից, ինչը թույլ է տալիս բացատրել ոչ միայն անհատների, այլ նաև այս կամ այն խմբի սոցիալական վարքագիծը<sup>8</sup>:

Կոռումանի կարծիքով՝ սոցիալական կապիտալը նույնքան արտադրողական է, որքան կապիտալի ցանկացած այլ տեսակ: Դա թույլ է տալիս հասնել որոշակի նպատակների, որոնք անհասանելի կլինեն դրա բացակայության պայմաններում: Սոցիալական, ինչպես նաև ֆիզիկական և մարդկային կապիտալները հեշտացնում են արտադրական գործընթացը: Այսպես՝ եթե որևէ խնդիր ներսում առկա է վստահության բարձր մակարդակ, ապա այդ խումբն ի վիճակի է ապահովել անհամենատ ավելի մեծ արդյունք, քան այն խումբը, որտեղ բացակայում է համախմբվածության ու վստահության մթնոլիրությունը: Վերլուծելով սոցիալական կապիտալի էությունը՝ Կոռումանը նշում է, որ դրա հիմքում տնտեսական սուբյեկտների կողմից ակնկալիքների և պարտավորությունների կուտակման գործընթացն է: Նա առանձնացնում է սոցիալական կապիտալի մի կարևոր հատկանիշ ևս. տեղեկատվության ձեռքբերման հնարավորությունը: Տեղեկատվությունը մեծ նշանակություն ունի ցանկացած գործունեության համար, սակայն դրա ձեռքբերումը բավականին մեծ ծախսեր է ենթադրում: Տեղեկությունների ստացման կարևոր ուղիներից են սոցիալական հարաբերությունները: Ըստ էության, սոցիալական կապիտալը նվազեցնում է նաև դրանց ձեռքբերման ծախսերը:

Կոռումանը կարևորում է նաև նորմերի և արդյունավետ սանկցիաների դերը սոցիալական կապիտալի ծևավորման հարցում: «Երբ գոյություն ունի նորմ, ընդ որում՝ արդյունավետ, դա ստեղծում է հզոր, թեպետ երբեմն էլ փիսրուն սոցիալական կապիտալի տեսակ»<sup>10</sup>: Այսպես՝ հանցավորության դեմ պայքարի նորմերը հնարավորություն են տալիս մարդկանց չանհանգստանալու իրենց անվտանգության համար: Կոլեկտիվում գործող չգրված օրենքները սոցիալական կապիտալի կարևոր տեսակ են, որոնք համախմբում են առանձին անհատների և ուղղորդում նրանց վարքագիծը ընդհանուր խնդիրների լուծմանը: Այս համատեքստում սոցիալական կապիտալը կարելի է բնորոշել որպես հասարակության գործունեության միկրո- և մակրոնակարդակներում առաջացող բոլոր տեսակի հարաբերությունների ամբողջություն՝ հիմնված ռացիոնալության սկզբունքի վրա, միտված հասարակության տարբեր խմբերի շահերի ներդաշնակ իրացմանը:

Անփոփելով սոցիալական կապիտալի ուսումնասիրությանը նվիրված նշված աշխատություններում առկա տեսակետները՝ կարելի է առանձնացնել տվյալ հասկացության ծևավորման հիմնական նախադրյալները և գործառույթները: Այդպիսի նախադրյալներ են՝

- ✓ Անձնավորված փոխհարաբերությունները տնտեսական գործակալների միջև: Մարդիկ շփումների ընթացքում աստիճանաբար ճանաչում են միմյանց, ինչն ավելի դյուրիհն է դարձնում շփումը, հարաբերությունները և նպաստում վստահության աճին:

<sup>8</sup> Տես Կուլման Ջ., Կաпитал социальный и человеческий // Общественные науки и современность, 2001, N 3, էջ 121-139:

<sup>9</sup> Տես նոյն տեղը:

<sup>10</sup> Տես նոյն տեղը, էջ 129:

- ✓ Փոխգործողության հաճախականությունը, երբ տնտեսական գործակալը վստահ է, որ հետագայում գործարքի մյուս մասնակիցը կարող է կատարել իր պարտավորությունները:
- ✓ Ինստիտուցիոնալ սահմանափակումների (նորմեր, պարտադրանքի ոչ ֆորմալ մեխանիզմներ) առկայությունը:
- ✓ Մարդկանց սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունը:

Սոցիալական կապիտալի հիմնական գործառություններն են՝

- ✓ Նպաստում է համակարգման ֆորմալ մեխանիզմների կիրառման հետ կապված գործարքային ծախսերի կրճատմանը՝ շնորհիվ գործակալների միջև վստահության աստիճանի բարձրացման<sup>11</sup>:
- ✓ Դյուրացմում է անձնավորված ոչ ֆորմալ փոխհարաբերությունները շուկայական գործակալների միջև: Այս գործառույթն առավել կարևորվում է բարձր ռիսկայնություն ունեցող նորարարական նախագծեր իրականացնելիս և սպեցիֆիկ ակտիվների շուկայում:
- ✓ Ներֆիրմային փոխհարաբերություններում (մեզոնակարդակ) նպաստում է գործարքային ծախսերի կրճատմանը ֆիրմայի ներսում և «արդինցիպալ-գործակալ» հակասության մեղմնանը:
- ✓ Մակրոմակարդակում (պետության, բիզնեսի, արհմիությունների և հասարակության փոխներգործություն) նպաստում է պետության նկատմամբ հասարակության վստահության աճին, սոցիալական կայունության ապահովմանը և, ի վերջո՝ տնտեսական աճին:

Նշենք, որ գրականության մեջ խորությամբ չի վերլուծվում սոցիալական կապիտալի գործառույթների դրսարությունը անցումային տնտեսությամբ երկրներում: Դրանք այսուեղ ձևակերպված են: Անկայուն ինստիտուցիոնալ միջավայրում սոցիալական կապիտալը անհավասարաշափ է բաշխվում հասարակության մեջ՝ կուտակվելով առավելապես միկրոնակարդակում: Որոշ հետազոտողներ համոզված են, որ սոցիալական կապիտալ կուտակելու ունակությունը ոչ թե անհատի, այլ սոցիալական կառուցվածքի հատկանիշ է<sup>12</sup>: Կարծում ենք՝ սոցիալական կապիտալի կուտակումը կատարվում է և միկրոնակարդակում, և մակրոնակարդակում: Ավելին՝ սոցիալական կապիտալի կուտակումը հենց անհատի ներքին հոգեբանական և սոցիալական պահանջմունքներից է բխում ու կարող է իրագործվել և գիտակցորեն, և ենթագիտակցաբար: Սոցիալական կապիտալը կուտակվում է ոչ միայն նյութական շահի իրացման ակնկալիքով, այլ նաև գուտ հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով: Սա, իհարկե, իմանականում վերաբերում է միկրոնակարդակում դրա կուտակմանը: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում Զ. Կոռլմանի մոտեցումը՝ մասնավորապես ընտանիքի մակարդակում: Այստեղ սոցիալական կապիտալն արտացոլում է փոխհարաբերությունները ծնողների և երեխաների միջև: Եթե ծնողների մարդկային կապիտալը բարձր է, բայց լրացված չէ սոցիալական կապիտալով, ապա մարդկային կապիտալը մեծ դեր չի կարող խաղալ երեխայի կրթական մակարդակի ձևավորման հարցում: Ըստ էության, ընտանիքի սոցիալական

<sup>11</sup>Տես Fukuyama F., Social Capital and Civil Society. Washington: IMF Institute and the Fiscal Affairs Department, www.inf.org/external

<sup>12</sup>Տես Խիթենկո Ի., Теоретические подходы к формированию понятия социальный капитал. „Известия ППГУ“, N 2(6), 2006, էջ 31:

կապիտալը ապահովում է երեխայի՝ ծնողների մարդկային կապիտալին հասանելիությունը և կախված է վերջիններիս ֆիզիկական ներկայությունից, երեխային հատկացվող ուշադրությունից<sup>13</sup>: Կարծում ենք՝ միկրոմակարդակում սոցիալական կապիտալը կարելի է ներկայացնել որպես մարդկային կապիտալի բաղադրամաս: Այդ մակարդակում սոցիալական կապիտալի կուտակման և ձևավորման վրա առավելապես մեծ ազդեցություն են թողնում ոչ ֆորմալ ինստիտուտները: Նշենք, որ միկրոմակարդակում սոցիալական կապիտալ ասելով հասկանում ենք փոխհարաբերությունները ընտանիքի, ընկերական շրջապատի, համայնքի ներսում, գործընկերների միջև: Մակրոմակարդակում սոցիալական կապիտալը դիտարկում ենք որպես փոխհարաբերությունների ամբողջություն և ֆորմալ ինստիտուտների՝ դատական, օրենսդրական և գործադիր իշխանության մարմինների նկատմամբ հասարակության վերաբերմունք, Վստահություն: Այս մակարդակում սոցիալական կապիտալը հանդես է գալիս որպես հասարակական բարիք, քանի որ դրա ձևավորմանն առավելապես նպաստում է պետությունը, իսկ արդյունքից օգտվում (կամ տուժում) են բոլորը: Որքան բարձր է հասարակության մեջ ինստիտուցիոնալ Վստահության մակարդակը, այնքան կատարյալ է հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը, այնքան մեծ են տվյալ հասարակության զարգացման հնարավորությունները: Միկրո- և մակրոմակարդակներում գոյություն ունի սոցիալական կապիտալի կուտակման որոշակի փոխկանություն: Եթե հասարակությունում գործող ինստիտուտները գործունակ չեն, ապա մակրոմակարդակում սոցիալական կապիտալը ձևախեղվուն է՝ պատճառ դաշնալով եկանուտների բաշխման անհավասարության խորացման, բնակչության միգրացիայի, կոռուպցիայի ընդունակության, մարդկային կապիտալի իրացման պայմանների վատթարացման և բնակչության որոշ մասի բարոյահոգեբանական անկման: Որևէ հասարակության սոցիալական կապիտալի որակը պայմանավորված է հասարակությունում գործող ֆորմալ ինստիտուտների արդյունավետությամբ: Այն հասարակարգերում, որտեղ ցածր է բնակչության վստահության աստիճանը պետական ինստիտուտների նկատմամբ, միկրոմակարդակում մեծանում է սոցիալական կապիտալի կուտակումը: Վերջինս սկսում է կուտակվել առանձին, թաքնված (լատենտային) կառույցներում, ինչը հանգեցնում է տնտեսության աղճատվածության:

Կարելի է ասել՝ որքան մեծ է սոցիալական կապիտալի խզվածությունը միկրո- և մակրոմակարդակներում, այնքան անարդյունավետ են տվյալ հասարակությունում գործող ինստիտուտները: Ավելին՝ սոցիալական կապիտալի կուտակումը միկրոմակարդակում խոչընդոտում է ինստիտուտների կատարելագործմանը: Այդ մասին են վկայում անցումային տնտեսություններում տեղի ունեցող գործընթացները: Բանն այն է, որ անցումային տնտեսությամբ երկրներում առաջացած «ինստիտուցիոնալ վակուումի» պարագայում լայն տարածում ստացան այնպիսի երևույթներ, ինչպիսիք են կոռուպցիան, չվճարումները, հարկերից խուսափումը, ինքնավերարտադրվող հորենտեսական տրամադրություններն ու անցումային ռենտայի յուրացման շուրջ ծավալվող պայքարը, որոնք տնտեսագիտական գրականության մեջ հայտնի են որպես «ինստիտուցիոնալ ծուղակներ»<sup>14</sup>: Եվ հենց նշված

<sup>13</sup> Տե՛ս Կուլման Ջ.՝, նշվ. աշխ., էջ 133:

<sup>14</sup> Տե՛ս Պոլտերович Վ., Институциональные ловушки и экономические реформы. ЦЭМИ РАН и РЭШ. М., 1990, էջ 12-14:

Երևույթների առաջացումն ու դրսերման ինտենսիվությունը սոցիալական կապիտալի լոկալ (միկրո) ձևերի առկայության անուղղակի ցուցանիշ են: Այս պարագայում լոկալ ցանցի գործակալները սոցիալական կապիտալն օգտագործում են իրենց ներ տնտեսական շահերի իրացման համար՝ ի վես պետական և հասարակական շահերի: Ըստ էության, տեղի է ունենում գործարարության և իշխանության սերտաճում, ինչն իր հերթին հանգեցնում է սոցիալական կապերի գաղտնագրման և փակվածության աճի՝ հիմնված սոցիալական մտերմության տարբեր մեխանիզմների վրա: Զևավորված «իշխանություն-գործարարություն» լոկալ ցանցերն այլև շահագործված չեն լինում կատարելագործելու գոյություն ունեցող ինստիտուտները: Զևավորվում է «արատավոր շրջան»: Թույլ ինստիտուտները պատճառ են դառնում սոցիալական կապիտալի ծևախեղման, իսկ ծևախեղված սոցիալական կապիտալը, կայունանալով, հարմարվելով և ինքնավերարտադրվելով, ծևավորում է կայուն ոչ արդյունավետ (հասարակության տեսանկյունից) սոցիալական նորմ, որը խոչընդոտում է թույլ ինստիտուտների կատարելագործմանը: Որքան տարածվում է կոռուպցիան, այնքան ավելի ակտիվորեն են սկսում աշխատել ավանդական մշակույթի մեխանիզմները որոշակի սոցիալական կառույցի ներսում: Այսինքն՝ միջանձնային վստահության աստիճանը աճում է՝ նվազեցնելով այս ինստիտուցիոնալ մեխանիզմների դերը, որոնք շուկայի գործակալների միջև ապահովում են քաղաքացիական վստահության անհրաժեշտ մակարդակ: Դա անցումային երկրների տնտեսական ցածր արդյունավետության պատճառներից մեկն է:

Սոցիալական կապիտալի տարբեր մակարդակների միջև ծևախեղումները հանգեցնում են դրականի նկատմամբ սոցիալական կապիտալի բացասական արտաքին էֆեկտների գերազանցության: Առաջանում է սոցիալական մեկուսացվածություն, երբ առանձին անհատներ կամ սոցիալական խմբեր մասնակիորեն կամ ամբողջությամբ դուրս են մղվում հասարակության սոցիալական գործընթացից և էական դեր չեն խաղում հասարակական կյանքում: Կարծում ենք՝ <<-ից արտագաղթի պատճառներից են ոչ միայն գործազրկությունը, աղքատությունը, այլ նաև սոցիալական կապիտալի փոշիացումը մակրոմակարդակում, երբ մարդիկ կորցնում են վստահությունը ոչ միայն ինստիտուտների, այլև ապագայի հանդեմ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ արտագաղթողների մեծ մասը կրթական բարձր մակարդակ, աշխատանք, որոշակի սոցիալական կապիտալ ունեցող անձինք են: Սոցիալական կապիտալի տեղայնացումը անցումային երկրներում, այդ թվում՝ <<-ում, նապատում է եկամուտների անհավասար բաշխման խորացմանը: Բանն այն է, որ «արտոնյալ խմբերի» սոցիալական կապիտալը ընդլայնում է վերջիններիս անդամների կարիերայի աճի հնարավորությունները, նպաստում «աշխատանքի տեղափորձան» շահավետ պայմանների ստեղծմանն ու կատարելագործմանը աշխատանքային գործունեության ընթացքում և այն: Ըստ էության, սրվում է «առևտսայդեր-ինսայդեր» խնդիրն աշխատանքի շուկայում: Դա պայմանավորված է նաև այն հանգանաքով, որ տեղային սոցիալական կապիտալի «գերիշխող» դիրքը հանգեցնում է տեղեկատվության անհամաչափության աճի՝ նվազեցնելով այդ խնդիրից դուրս գտնվող անձանց շահերի իրացման հնարավորությունները:

Սոցիալական կապիտալի առկայությունը մրցունակ է դարձնում աշխատողին աշխատանքի շուկայում, քանի որ գործատուն այդ դեպքում կարող է

ակնկալել հատուցում աշխատողի և մարդկային, և սոցիալական կապիտալ-ներից: Սոցիալական կապիտալի տեղայնացումը հանգեցնում է նաև մարդկային կապիտալի իրացման պայմանների վատթարացման: Սոցիալական կապիտալի կուտակումը միկրոնակարդակում նպաստում է մենաշնորհային դիրքի ուժեղացմանը մի կողմից՝ ապրանքների և ծառայությունների շուկայում, մյուս կողմից՝ աշխատանքի շուկայում, ինչը, ըստ էլույյան, պատճառ է դառնում վարձու աշխատողների կրկնակի շահագործման և մարդկային կապիտալի վերարտադրության ողջ գործընթացի ձևախեղման:

Արևմտյան հետազոտողներից շատերի կարծիքով՝ անցումային երկրների սոցիալական կապիտալի քայլայումը տեղի է ունեցել խորհրդային ժամանակաշրջանում: Նրանք նշում են, որ հասարակության մասշտաբով սոցիալական կապիտալի ձևավորման և գոյության համար անհրաժեշտ է զարգացած ինստիտուցիոնալ ենթակառուցվածք, որին ապահովում է կարգ ու կանոն և բնակչության տարբեր խմբերի մասնակցություն հասարակական կյանքին: Խորհրդային համակարգում հասարակական կյանքի խիստ կանոնակարգումը «վերկից» արգելափակում էր անձնական նախաձեռնողականությունն ու հորիզոնական կապերի զարգացումը: «Գրեթե բոլոր հետխորհրդային երկրներում առկա է սոցիալական կապիտալի պակասուրդ, քանի որ սոցիալիզմը քայլայեց նորմալ կոռպերացիայի շատ ձևեր՝ թողնելով միայն չարագույց անհատապաշտության ամենացինիկ տեսակները»<sup>15</sup>:

Կարծում ենք՝ պետական հովանավորությունը նախկին ԽՍՀՄ-ում գսաել է սոցիալական կապիտալի կուտակումը առանձին խմբերի ներսում, բայց միաժամանակ նպաստել է միավորող սոցիալական կապիտալի կուտակմանը ողջ հասարակության մասշտաբով: Փաստորեն, դա սոցիալական կապիտալի ձևախեղման մեկ այլ տեսակ է, երբ մակրոնակարդակում դրա կուտակումը հանգեցնում է միկրոնակարդակում վերջինիս նվազման: Հենց այս հանգանանքն էլ, թվում է, առավել խստացրեց «ինստիտուցիոնալ վակուումը» անցման շրջանում. Երբ մակրոնակարդակի սոցիալական կապիտալը «փլուզվեց», հասարակությունը ստիպված էր արագորեն դա փոխադարձ սոցիալական կապիտալի այլ տեսակների կուտակմամբ: Ինչպես Ֆ. Ֆուկույաման է նշում սոցիալական կապիտալի ձևավորման ակունքները մարդու կենսաբանական բնույթի հիմքում են և պայմանավորված են «սոցիալական կարգ ու կանոնի վերականգնման մարդկային հզոր ներքին պահանջով»<sup>16</sup>:

Անփոփելով վերը ներկայացված՝ կարող ենք եզրակացնել, որ ստեղծված «սոցիալական ծուղակից» ելքը կարող է նախանշել միայն պետությունը՝ ստեղծելով գործունակ ինստիտուտներ, որոնք կնպաստեն հասարակության բոլոր խավերի շահերի իրացմանը: Քաղաքակիրթ հասարակարգերում բոլոր մակարդակների հշխանական կառույցներն ազատ և անկախ են գործարար խմբերի շահերի ազդեցությունից, իսկ անցումային երկրներում հշխանական կառույցները դառնում են առանձին խմբերի շահերի արտահայտիչ, մինչդեռ պարտավոր են պաշտպանել հասարակության շահերը: Արդյունքում առաջանում են լուրջ անհամանանություններ ռեսուրսների բաշխման ոլորտում:

<sup>15</sup> Стиглиц Дж., Эллерман Д., Макро и микроэкономические стратегии для России. www.rusref.am.ru

<sup>16</sup> Стін Фукуяма Ф., Доверие, социальные добродетели и путь к процветанию. „Ермак”, 2004, № 40:

Այս կապակցությամբ որոշ հետազոտողներ կարծում են, որ երկրի տնտեսական զարգացման գործում առաջնահերթությունը պատկանում է ոչ թե ինստիտուտների արդյունավետությանը, այլ որակյալ մարդկային կապիտալին: Այսպես՝ Է. Գլեյզերը և հայտնի աշխատության համահեղինակները փորձում են ապացուցել, որ մարդկային կապիտալը տնտեսական աճի ապահովման ավելի կարևոր գործոն է, քան ինստիտուտները, իսկ ինստիտուտների կատարելագործումը տեղի է ունենում այն բանից հետո, երբ երկիրը հաղթահրում է աղքատությունը՝ շնորհիվ Ճիշտ ընտրված տնտեսական քաղաքականության<sup>17</sup>: Տնտեսական աճի գործումների ստանդարտ ռեգուլիստները վերլուծության արդյունքները վկայում են, որ կրթական մակարդակը առավել մեծ չափով է ազդում տնտեսական աճի վրա, քան ինստիտուտները: Այս խնդիրն ուսումնասիրող հեղինակները երկրները դասակարգել են ըստ մարդկային կապիտալի կուտակման մակարդակի և քաղաքական ռեժիմների: Ըստ կուտակված մարդկային կապիտալի մակարդակի առանձնացվել է երկրների երեք խումբ՝ ցածր, միջին և բարձր, իսկ ըստ քաղաքական ռեժիմի՝ ինքնակալ, կայուն ժողովրդավարական երկրներ, ինչպես նաև երկու միջանկայլ խումբ՝ ոչ կատարյալ ինքնակալ և ժողովրդավար: Այս խմբերի համադրումը ցույց է տալիս, որ դեմոկրատական երկրներում բարձր է մարդկային կապիտալի որակը, իսկ գորեք բոլոր ինքնակալական երկրներում՝ ցածր: Ստացված արդյունքները մեկնաբանելիս հեղինակները հիմնվում են ամերիկացի հայտնի քաղաքագետ Ս. Լիպսետի «Քաղաքական մարդ» աշխատության վրա, որտեղ նշվում է, որ կրթությունից ստացվող հիմնական էֆեկտը կրում է ոչ այնքան տեխնոլոգիական, որքան քաղաքական բնույթը: Կրթության դրական արտաքին դրսւորումները նվազեցնում են բռնությունների մակարդակը հասարակության մեջ, կրնֆիլիկուների լուծման ժամանակ դատարաններն ու օրենսդրական մարմինները գալիս են փոխարինելու բռնությանը<sup>18</sup>: Այսպիսով՝ հեղինակները եզրակացնում են, որ մարդկային ու սոցիալական կապիտալները հասարակության արտադրական հնարավորությունները կանխորոշող հիմնական գործոն են: Ինստիտուտները երկրորդական ազդեցություն են թողնում և կատարելագործվում են եկամուտների աճին գուգընթաց:

Կարծում ենք՝ նշված եզրահանգումներն ընդունելի են զարգացած երկրների դեպքում, որտեղ ինստիտուցիոնալ «խողովակները» արդյունավետ են, որովհետև մարդիկ իրապես մասնակցում են քաղաքական գործնաթացներին և ինստիտուտների հետագա կատարելագործմանը: Անցումային տնտեսությամբ շատ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, նախանցումային ժամանակաշրջանում կուտակվել էր բավականին որակյալ մարդկային կապիտալ, սակայն, ինչպես տեսնում ենք, անցումային շրջանում այդ կապիտալը որևէ դեր չխաղաց տնտեսական աճի ապահովման հարցում: Դրա պատճառն այն է, որ «ինստիտուցիոնալ վակուում» պայմաններում մարդկային կապիտալը պարզապես ի վհճակի չէ կայացնելու ինստիտուտներ: Իրավիճակն էլ ավելի է խորանում անցումային շրջանում առաջացած «ինստիտուցիոնալ ծուլակների» առկայության պայմաններում, երբ այդ «ծուլակներում» հայտնված մարդիկ դուրս գալու միակ ելքը տեսնում են արտագաղթի

<sup>17</sup> Stein Gleyzer Է., La Porta R., Lopez de-Silanes F., Shleifer A., Являются ли институты причиной экономического роста?, „Эковест”, 2006, № 248-287:

<sup>18</sup> Stein Lipset S., Political Man: The Social Basis of Modern Politics. N.Y.: Doubleday, 1960:

մեջ: Գլեյզերն իր աշխատության մեջ քննարկել է միայն զարգացած և Լատինական Ամերիկայի, Հարավային Աֆրիկայի, Ասիայի երկրների ինստիտուտների ու մարդկային կապիտալի փոխհարաբերության հարցերը, այդ իսկ պատճառով նրա հետևողություններն այդքան էլ ընդունելի չեն անցումային տնտեսությամբ երկրների համար: Դա, իհարկե, չի նշանակում, որ մարդկային և սոցիալական կապիտալները կարևոր չեն տնտեսական զարգացման առումով: Պարզապես յուրաքանչյուր երկիր ունի իր առանձնահատկությունները, զարգացման հետագիծը, և պատճական որոշակի պահի կարևորվում է այս կամ այն գործոնի դերն այդ երկրում: Անցումային երկրների համար, անկասկած, մարդկային կապիտալի դերը որոշիչ է, բայց դրա կիրառման արդյունավետության բարձրացման համար ինստիտուտների կատարելագործումն ուղղակի կենսական անհրաժեշտություն է այսօր:

**ФИРУЗА МАИЛЯН**

Доцент кафедры „Экономической теории“ АГЭУ,  
кандидат экономических наук

***Сущность социального капитала и особенности его выражения в переходной экономике.***- В статье рассматривается сущность социального капитала, уточнены функции социального капитала и дана авторская классификация его видов. Представлены также современные теории социального капитала, и в контексте сравнительного анализа выявлены преимущества и недостатки данных теорий. Особое внимание уделено роли социального капитала в странах с переходной экономикой, в частности его роли в процессе реализации человеческого капитала. Проанализированы особенности выражения социального капитала на микро, мезо и макроуровнях и выявлено его влияние на уровень развития экономики.

**FIRUZA MAYILYAN**

Associate Professor at the Chair of  
„Theory of Economics“ at ASUE,  
PhD in Economics

***The Essence of Social Capital and Peculiarities of Its Expression in the Transition Economy.***- This paper presents a comparative analysis of the key concepts of social capital and the author's approach to this category. The essence of interaction of institutions of human and social capital is disclosed. Particular attention is paid to the disclosure of the role of social capital in the process of formation and realization of human capital. The peculiarities of social capital in countries with economies in transition are analyzed. The negative effects of external social capital in terms of "institutional vacuum" are revealed.

